2024, ԱՊՐԻԼ Ա, ԹԻՎ 7 (651)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հայտարարություն Հայաստանի եպիսկոպոսների և թեմական առաջնորդների՝ Տավուշի մարզից տարածքներ հանձնելու վերաբերյալ

Վերջին շրջանի զարգացումները այլևս կասկած չեն թողնում, որ Հայաստանի իշխանությունները Արցախի լիակատար հայաթափման և ՀՀ տարածքների բռնազավթման պայմաններում, տեղի տալով Ադրբեջանից հնչող սպառնալիքներին, պատրաստվում են վերջինիս հանձնել Տավուշի մարզից տարածքներ՝ նախքան ենթադրվող սահմանազատումն ու սահմանագծումը:

Պարտվողական այս մոտեցմամբ, տարածքային ցավալի հերթական զիջումներով, ըստ էության, հաչս միջազգային հանրության լեգիտիմացվում են Հայաստանի տարածքների նկատմամբ Ադրբեջանի կեղծ պահանջատիրությունը և դատապարտելի հավակնությունները:

Եկեղեցին միարժեքորեն ողջունում է խաղաղության հասնելուն ուղղված բոլոր ողջամիտ ջանքերն ու գործընթացները: Անվիճարկելի է, որ միակողմանի զիջումներով «խաղաղության դարաշրջան» կերտելու՝ Հայաստանի իշխանությունների որդեգրած քաղաքականությունը ոչ միայն անիրատեսական է, այլև աղետաբեր: Հայրենի հողի շուրջ սակարկումները և չարդարացված շարունակական զիջումները երբեք անվտանգային միջավայր չեն կարող ապահովել մեր ժողովրդի համար:

Տևական ու ամուր խաղաղություն հնարավոր է կերտել ազգային արժանապատվության և իրավունքների հանդեպ լիարժեք հարգանքի դրսևորման և փոխադարձության սկզբունքի պահպանման պայմաններում:

Կոչ ենք ուղղում ՀՀ իշխանություններին՝ հրաժարվել պարտվողական գործելաոճից և ծառացած հիմնախնդիրների շուրջ բանակցություններում ընթացք չտալ պարտադրվող այնպիսի լուծումների, որոնք հայրենիքը կկանգնեցնեն անվտանգային նոր մարտահրավերների առջև:

Կոչ ենք ուղղում նաև Հայաստանի և Սփյուռքի ազգային, քաղաքական, հասարակական կազմակերպություններին, հայրենիքի ապագայով մտահոգ ազգի բոլոր զավակներին՝ այդ թվում և պետական պաշտոնատար անձանց՝ համախմբվել և համազգային միասնականությամբ պաշտպանել ազգային-պետական մեր շահերը, ողջ ներուժով ներդրում բերել պետականության ամրապնդման ու բարօր, ապահով գալիքի կերտման գործում:

Հավատում ենք, որ մեր ժողովրդի մեջ զորեղ է հայրենանվիրումի և անձնականն ի սեր ազգի զոհաբերելու հանձնառության ոգին, ամուր՝ ազգային ինքնությունը պահպանելու նախանձախնդրությունը, և մենք Հարուցյալ Փրկչի օգնականությամբ ու համընդհանուր ջանքերով ի զորու ենք հեռացնելու արհավիրքն ու չարիքը հայրենական մեր կյանքից:

Սրտաբուխ աղոթքով հայցում ենք Երկնավոր Տիրոջից, որ խաղաղության ու համերաշխության շնորհները հեղի մեր երկրի և ժողովրդի կյանքում և անվտանգ ու անսասան պահի Հայոց անկախ պետականությունը:

4 ապրիլի, 2024 թ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իրավախորհրդատվական հանձնախմբի հայտարարությունը

««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ

Բռնության կանխարգելումը չպիտի ծառայեցվի որպես առիթ՝ ընտանիքի ավանդական ընկալման ձևախեղման համար

Խիստ տարակուսանքով տեղեկացանք, որ Ազգային Ժողովում վերստին քննարկման է դրված ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի խնդրահարույց նախագիծը:

Եկեղեցին ողջունում է յուրաքանչյուր նախաձեռնություն, այդ թվում և իրավական փաստաթուղթ, կոչված բացառելու բռնությունն ինչպես ընտանիքում, այնպես և սոցիալական որևէ այլ միջավայրում: Բռնության ցանկացած դրսևորում դատապարտելի է, և բոլոր մարդիկ գտնվում են Աստծո անփոփոխ խնամքի ներքո, քանզի Սուրբ Գիրքը վկայում է Տիրոջ խոսքը, թե. «Ես նրանց համար Աստված պիտի լինեմ, և նրանք ինձ համար պիտի լինեն որդիներ» (Հայտն. 21.7):

Այսուհանդերձ, խիստ անընդունելի են նախագծում առկա որոշ ձևակերպումներ և հասկացություններ:

Մասնավորաբար՝ նախագծի վերնագրում և բովանդակության մեջ ներդրված «կենցաղային բռնություն» հասկացությունը խիստ անորոշ է ու տարածական, հակասում է ընտանիքի ներսում բռնությունների կանխարգելման նպատակին և արհեստականորեն ընդլայնում է օրենքի կարգավորման տիրույթը:

Առավել քան մտահոգիչ է նախագծում «զուգընկեր» հասկացության նորամուծությունը, որտեղ սահմանվում է. «զուգընկեր՝ անձ, որի հետ առկա են հարաբերություններ, որոնց հատուկ է սիրային կապը՝ անկախ համատեղ բնակության կամ միմյանց հետ սեռական հարաբերություններ ունենալու հանգամանքից»: Սրան զուգահեռ՝ նախագծում որևէ ձևով չի բացառվում, որ զուգընկեր կարող են համարվել նաև նույնասեռ անձինք, որոնց միությունը, ըստ էության, հավասարեցվելու է ընտանիք հասկացությանը:

Ընտանիքը տղամարդու և կնոջ սիրո միությունն է՝ Աստծո կամքի մեջ միավորված և սերնդագործությամբ օրհնված: Ընտանիքի ավանդական ընկալումը գոյաբանական նշանակություն ունի մեր ազգի համար և չի կարող սակարկման առարկա լինել:

Հետևաբար, բռնության կանխարգելումը չպիտի ծառայեցվի որպես առիթ՝ ընտանիքի ավանդական ընկալման ձևախեղման համար: Բռնության, ինչպես և ցանկացած այլ չարիքի կանխարգելումը և դրա դեմ պայքարը պետք է իրագործվի այնպիսի միջոցներով, որոնք պատճառ չեն դառնա չարիքի խորացմանն ու նոր բռնության:

Արդ, հաշվի առնելով վերը նշված, ինչպես և մի շարք այլ մտահոգիչ ձևակերպումներ ու նորամուծություններ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իրավախորհրդատվական հանձնախումբն անընդունելի է համարում նմանօրինակ նախաձեռնությունը և հորդորում է Ազգային Ժողովի խմբակցություններին և պատգամավորներին մերժել նախագծի ընդունումը:

Յուրաքանչյուր պատգամավորի քվեարկության արդյունքը ակներև է դարձնելու նրա վերաբերմունքն ու պատասխանատվությունն իր իսկ ընտանիքի, իր իսկ երեխաների և սերունդների նկատմամբ ու հավատարմությունը քրիստոնեական ավանդական ընտանեկան արժեքներին:

Ազգային Ժողովի պատգամավորներին մաղթում ենք արդյունավոր ծառայություն՝ ի նպաստ մեր երկրի զորացման և ազգային մեր ինքնության ամրապնդման:

4 ապրիլի, 2024 թ.

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձն Ավետման տոնի առիթով

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ ի մասնավորի բոլոր տիկնանց, օրիորդներին և մայրության բերկրանքին սպասող կանանց՝ Սուրբ Աստվածածնի ավետման հոգենորոգ տոնի առիթով:

Աստվածամայրն իր առաքինի կերպարով, հեզությամբ ու աստվածսիրությամբ բարի օրինակ է բոլոր մայրերին ու օրիորդներին, որոնք գովելի ջանքեր ու նվիրում են բերում իրենց ընտանիքների բարօրությանը և մեր ժողովրդի առաջընթաց կյանքին:

Սիրելինե՛ր, փորձություններով ուղեկցվող այս օրերին, երբ ազգային մեր սպասումներում մշտարթուն ակնկալությունն ունենք Տիրոջ օգնականության, Սուրբ Կույսին ուղղված հրեշտակի խաղաղեցնող ավետիսը հնչում է նաև ձեզ համար. «Աստված ձեզ հետ է»: Ձեր սրտերում ամուր պահեք առ Աստված հավատարմությունը, զորացյալ մնացեք հավատի, հույսի ու սիրո մեջ, որպեսզի Աստծուն ապավինած ու միմյանց աջակից՝ կարող լինեք դիմակայել բոլոր մարտահրավերներին և դեպի վերելք առաջնորդեք ձեր կյանքը:

Սիրելի՛ մայրեր և քույրեր, Միածնաէջ տաճարի Սուրբ Խորանի առջև աղոթում ենք, որ Աստվածամոր բարեխոսությամբ Բարձրյալն Աստված Իր օրհնության և խնամքի ներքո պահի ձեզ և ձեր ընտանյաց անդամներին, որպեսզի ձեր սրտերում տեղ չգտնեն հուսահատությունը, ցավն ու տրտմությունը: Թող Տերն Իր գթառատ սիրով խաղաղ ու բարօր կյանք պարգևի մեր ժողովրդին՝ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի:

7 ապրիլի, 2024 թ.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Ապրիլի 5-ին **Արցախի թեմի առաջնորդին և թեմական խորհրդի անդամներին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արցախի թեմի թեմական խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ թեմական առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի:

Հանդիպմանը քննարկվեցին Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանության, նրանց սոցիալական կացության և բարոյահոգեբանական վիճակին առնչված հարցեր: Անդրադարձ կատարվեց նաև Եկեղեցու կողմից իրականացվող աջակցության ծրագրերին:

Հայոց Հայրապետը հորդորեց թեմական առաջնորդին և թեմական խորհրդի անդամներին, որ շարունակեն Մայր Աթոռի համապատասխան կառույցների և սփյուռքի թեմերի հետ համագործակցաբար հնարավոր բոլոր միջոցները գործադրել միջազգային ու միջեկեղեցական կառույցների առջև բարձրաձայնելու Արցախի ժողովրդի իրավունքների ապահովման, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության հիմնախնդիրները:

Անհրաժեշտ նկատելով թեմական կառույցների պահպանությունը՝ Նորին Սրբությունը կարևորեց նաև արցախահայերի համախմբման, ոգու զորացման և ծառացած մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ իրականացվող ծրագրերի շարունակականությունը:

Ապրիլի 7-ին **Ֆրանսիայի Բուշ-դյու-Ռոնի Դեպարտամենտային խորհրդի նախագահի գլխավորած պատվիրակությանը**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության Բուշ-դյու-Ռոնի Դեպարտամենտային խորհրդի նախագահ տիկին Մարտին Վասալի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր վրդ. Խաչատրյանի:

Հանդիպմանը ներկա էր նաև Հայաստանում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերին և անդրադառնալով հայ-ֆրանսիական դարավոր բարեկամությանը, իր գնահատանքը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին՝ հայոց ցեղասպանությունը վերապրած ֆրանսաբնակ հայորդիների նկատմամբ հոգածու վերաբերմունքի, ինչպես նաև այս դժվարին օրերին Հայաստանին ցուցաբերվող զորակցության համար: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց Հայաստանի անվտանգային մարտահրավերներին, Արցախի բռնազավթման ու հայաթափման, մինչ օրս Ադրբեջանում պահվող հայ ռազմագերիների ազատ արձակման և Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին՝ այդ ուղղությամբ կարևորելով բարեկամ երկրների և միջազգային հանրության գործուն քայլերի ձեռնարկումը:

Իր հերթին Դեպարտամենտային խորհրդի նախագահ Մարտին Վասալն Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրեց պատվիրակության անդամներին: Շեշտելով Հայաստան և հայոց հոգևոր կենտրոն կատարած իրենց այցի կարևորությունը՝ Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց պատվիրակության առաքելության ու ծրագրերի վերաբերյալ, որոնք միտված են երկու երկրների բարեկամական հարաբերությունների առավել սերտացմանը և հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանը:

Ապրիլի 10-ին **«Դանիական-հայկական բարեգործական առաքելություն» ՀԿ անդամներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Դանիական-հայկական բարեգործական առաքելություն» հասարակական կազմակերպության ատենապետ հայր Մայքլ Թոմսենին և կազմակերպության հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ ուղեկցությամբ գործադիր տնօրեն Արշավիր Գաբուճյանի:

Տիար Գաբուճյանը, ներկայացնելով խորհրդի անդամներին, ընդգծեց, որ կազմակերպության՝ Հայաստանում գործունեության 20-ամյակի առիթով այցելել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ ստանալու Հայոց Հայարպետի օրհնությունը: Այնուհետև Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց բարեգործական կազմակերպության պատասխանատուներին՝ Հայաստանում սոցիալական և կրթական ոլորտներում իրականացվող ծրագրերի համար: Հայոց Հովվապետը գոհունակությամբ արձանագրեց, որ Մայր Աթոռի, հայաստանյան թեմերի և կազմակերպության միջև հաստատված սերտ գործակցությունը նպաստում է նաև կիրակնօրյա դպրոցների արդյունավետ գործունեությանը:

Իր հերթին հայր Մայքլ Թոմսենը Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրեց թեմերի հետ համատեղ իրականացվող ծրագրերը՝ իր երախտագիտությունը հայտնելով Նորին Սրբության մշտական զորակցության և օրհնության համար:

Ապրիլի 12-ին **ՀՀ-ում Ավստրալիայի դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ավստրալիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Գիրինգին (նստավայրը՝ Մոսկվա):

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց Հայաստանի առջև ծառացած անվտանգային մարտահրավերներին՝ շնորհակալությամբ ընդգծելով, որ Ավստրալիան մշտապես զորավիգ է եղել հայ ժողովրդին, նաև դժվարին այս շրջանում իր կարևոր աջակցությունը բերել հայրենազրկված արցախահայությանը:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Ավստրալիայի իշխանություններին հայ համայնքի հանդեպ դրսևորվող հոգատար վերաբերմունքի առնչությամբ, ինչի ականատեսն է եղել հովվապետական այցերի ընթացքում: Դեսպան Ջոն Գիրինգը հավաստիացրեց Նորին Սրբությանը, որ իր պաշտոնավարման ընթացքում հնարավոր բոլոր ջանքերը կգործադրի երկկողմ կապերի ամրապնդման և խորացման համար: Դեսպանը շեշտեց նաև Ավստրալիայում հաջողություններ արձանագրած հայ համայնքի կյանքում Հայոց Եկեղեցու կարևոր առաքելությունը:

Զրույցի ընթացքում խոսվեց բռնի տեղահանված արցախցիների և պատանդառված ռազմագերիների իրավունքների պաշտպանության, Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության պահպանությանն առնչված խնդիրների, ինչպես և Եկեղեցու կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերի մասին:

Ապրիլի 14-ին **Ավստրիայի Գրաց-Սեկաուի թեմի առաջնորդին և ուխտավորներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ավստրիացի ուխտավորների՝ գլխավորությամբ Ավստրիայի Գրաց-Սեկաու թեմի առաջնորդ Վիլհելմ եպս. Քրաուտվաշլի և ուղեկցությամբ Կենտրոնական Եվրոպայի և Շվեդիայի հայրապետական պատվիրակ Տ. Տիրան եպս. Պետրոսյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, անդրադառնալով ներկա ժամանակներում հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին, իր շնորհակալությունը հայտնեց Ավստրիայի իշխանություններին և ժողովրդին՝ Հայաստանին ցուցաբերած աջակցության համար:

Նորին Սրբությունն իր օրհնությունը փոխանցեց ուխտավորներին՝ նրանց այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին նկատելով զորակցության ևս մեկ վկայություն:

Իր հերթին Վիլհելմ եպիսկոպոսը հաստատեց, որ ուխտավորաբար Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել՝ իրենց համերաշխությունը բերելու հայ ժողովրդին ու Եկեղեցուն, և աջակցությունը՝ արցախահայերին:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ԴԱՄԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հանուն Եկեղեցու. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի գիտական աշխատանքի համատեքստը

Աբրահամ ՏԵՐՅԱՆ,
աստվածաբանության դոկտոր, հայագետ



Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը (պաշտոնավարել է 1943–1952 թթ.) մարմնավորում է այն մարտահրավերը, որին բախվում է Հայ Եկեղեցին քսաներորդ դարասկզբի երկու պատմական իրողությունների՝ իր ժողովրդի ցեղասպանության և նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կոմունիստական իշխանության հետևանքով: Այս իրադարձությունները վտանգեցին Եկեղեցին. հարվածներ, որոնք Եկեղեցին ամբողջապես չի հաղթահարել: Որպես հոգևորական՝ Հովսեփյանը խորապես էր արձագանքում երկու աղետներին էլ՝ Սարդարապատի ճակատամարտում (1918 թ. մայիսի 21–29) իր աջակցությամբ և Սփյուռքի համայնքներից Ամենայն Հայոց Կաթողիկոսության մեկուսացման բարելավմամբ՝ անձնապես դառնալով դրանց միջև կապող օղակը: Գովելի է նման օրինակելի հոգևորականը, որը ոգեշնչում է, առավել ևս, որ Եկեղեցին շարունակում է դիմակայել անցյալ դարի տևական հետևանքներին: Գարեգին Հովսեփյանից շատ բան կա սովորելու այսօրվա մարտահրավերներին դիմակայելու համար: Իմ մտասևեռումը, սակայն, նրա գիտական ձեռքբերումներն են: Նրա կյանքն ու ստեղծագործությունները, ինչպես նաև նրա բազմակողմանի և առաջնակարգ գիտական ներդրումների վերժամանակյա լինելը լիարժեք գնահատելու համար մենք պետք է դրանք համատեքստային դարձնենք, բայց նախևառաջ՝ նրան իր ժամանակակիցների հետ դեմ հանդիման:

Նա պատկանում է վաստակաշատ բանասերների սերնդին (բոլորն էլ Գևորգյան հոգևոր ճեմարանի (1874–1917) շրջանավարտներ), որոնք արտոնություն են ստացել բարձրագույն կրթություն ստանալու քննադատական մեթոդաբանությամբ հայտնի գերմանական համալսարաններում. Կարապետ Տեր-Մկրտչյան (1866–1915)՝ «Կնիք հաւատոյ»-ի (1914) հրատարակիչ, Գալուստ Տեր-Մկրտչյան Միաբան (1860–1918)՝ Ագաթանգեղոսի (1909), Եզնիկ Կողբացու նորահայտ ձեռագրի (1904), Վահան Մամիկոնյանին ուղղված Ղազար Փարպեցու թղթի (1904), Շապուհ Բագրատունու «Պատմության» (1921) և Էջմիածնի բրոնզե առարկաների գրացուցակի (1896) հրատարակիչ, Երվանդ Տեր-Մինասյան (1879–1964)՝ «Հայոց Եկեղեցու հարաբերությունները ասորւոց եկեղեցիների հետ» աշխատության (1904) հեղինակ, Իրենեոսի «Ընդդեմ հերետիկոսաց» (1907) հայերեն տարբերակի և Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» պատմության (1957) հրատարակիչ:

«Արարատ» ամսագրի 1907 թ. հուլիս–օգոստոս–սեպտեմբեր համարում Գարեգին Հովսեփյան Կաթողիկոսը հրատարակել է երկու հաջորդական հոդված՝ «Հայրենասիրութիւն եւ Քրիստոնէութիւն», «Մեր հոգևոր Հայրենիքը»: Երկու հոդվածներն էլ վերաբերում են Հայ Եկեղեցու եկեղեցաբանությանը (էկլեսիոլոգիա): Առաջին հոդվածում, հիմնվելով բոլոր ազգերին աշակերտներ դարձնելու ավետարանական պատգամի վրա, նա ջանում էր ցույց տալ, որ էթնիկ Եկեղեցիների համար աստվածաշնչյան հիմք կա: Քանի որ, ըստ սուրբ Պողոսի, ոչ միայն Ընդհանրական Եկեղեցին, այլև տեղական Եկեղեցին կազմում են Քրիստոսի ամբողջ մարմինը (Հռոմ. ԺԲ 5, Ա Կորնթ. ԺԲ 12–27, Եփես. Գ 6, Ե 23, Կող. Ա 18, Ա 24), նշանակում է, որ հայկական-ծխական եկեղեցին Քրիստոսի հայկական մարմինն է կամ հայ Քրիստոս: Այստեղ տեսնում ենք մի լավ օրինակ, ինչ աստվածաբաններն անվանում են «աստվածաբանել»: Ճիշտ է՝ սուրբ Պողոսն ասում է, որ Քրիստոսի մեջ ոչ հրեա կա, ոչ հեթանոս (Գաղ. Գ 28ա), սակայն սա չի վերացնում էթնիկ ինքնությունը. Հիսուսն Ինքը հրեա էր: Սուրբ Պողոսը նկատի ունի այն, որ Աստված, Քրիստոսի միջոցով Իր հայտնության մեջ, խտրականություն չի դնում ազգերի միջև. նրանք հավասարապես արտոնված են Աստծու փրկության ծրագրի շրջանակներում: Նմանապես՝ Քրիստոսի մեջ չկա «ոչ արու, ոչ էգ» (Գաղ. Գ 28բ), սակայն սեռային տարբերությունները դեռևս պահպանվում են Եկեղեցում: Հովսեփյանը փափագում էր այն օրը, երբ Եկեղեցին այլևս խտրականություն չի դնի տղամարդու և կնոջ միջև:

Ավելին. այն, ինչ մենք լսում ենք, թե ինչ է քարոզվում Պենտեկոստեի օրը «Գործք առաքելոց»-ում, Ավետարանի համընդհանուր հռչակումն է՝ Կերիգման (Ավետարանի քարոզչությունը), սակայն յուրաքանչյուր էթնիկ խումբ այն լսում է իր մայրենի լեզվով՝ դրանով իսկ վավերացնելով էթնիկության տեղը քրիստոնեության մեջ: Գարեգին Հովսեփյանը եզրափակում է՝ մեջբերելով սաղմոս ՁՁ 9-ը (հայ. Ձե 9). «Բոլոր ազգերը, որոնց ստեղծեցիր, պիտի գան և երկրպագեն Քո առաջ և Քո անունը հավիտյան փառավորեն» (ավելի վաղ մեջբերելով սաղմոս ՃԺԷ1-ը (հայ. ՃԺԶ1). «Տիրո՛ջն օրհնեցեք, բոլո՛ր ազգեր, // Գովե՛ք նրան, ո՛ղջ ժողովուրդներ»): Նա իրավացիորեն այս սաղմոսները դիտարկում է որպես մեսիական կանխատեսումներ քրիստոնեական դարաշրջանին առնչվող. մի ժամանակաշրջան, որտեղ էթնիկական ինքնությունները շարունակում են գոյություն ունենալ:

Երկրորդ հոդվածի երկու հատվածներում հորդում է նրա աստվածաբանական իրատեսությունը: Նա սկսում է երկնային հայրենիքի աստվածաշնչյան վարդապետությունից, որին ձգտում են քրիստոնյա բոլոր հավատացյալները: Չնվազեցնելով նման հայրենիքի դրախտային իրականությունը՝ նա գիտակցում է, որ այս երևակայական հայրենիքը մշակութային հղացք է, այլապես անհասկանալի կլիներ նույնիսկ բազմամշակույթ մարդկանց համար: Նրա տեսակետը կարելի է բացատրել հետևյալ օրինակով. քարե դարում գտնվող քարանձավաբնակ մարդը երբեք չի պատկերացնի Աստծուն գահին նստած, քանի որ այդ մարդը չգիտի, թե ինչ է աթոռը: Նա չի իմանա նաև դրախտային քաղաքի մասին՝ ոսկյա դարպասներով և փողոցներով, որոնք երկուսն էլ մշակութային առումով իրեն անծանոթ են: Հովսեփյանն անմիջապես վերադառնում է երկրի վրա գտնվող Եկեղեցու, որը դրախտային իրողությունների արտացոլումն է: Թեև Եկեղեցին հիմնադրել է Քրիստոսը, նրա երկրային իրականությունը մշակութաբանորեն է մեկնաբանվում (նրա ճարտարապետությունը, պատարագը, գրականությունը և այլն), այնպես էլ Հայ Եկեղեցին՝ իր յուրահատուկ մշակույթով: Թույլ տվեք մեջբերել միայն մեկ պարբերություն, թեև երկար, որն ամփոփում է նրա միտքը. «Եթէ իրաւ է մեր ասածը, թէ հոգևոր կեանքով ապրող ազգերը սովորական, երկրաւոր հայրենիքից զատ ունին մի ուրիշ, վերացական հայրենիք, նոցա անցեալ քաղաքակրթութիւնն ընդարձակ մտքով, ապա ուրեմն Հայ ժողովրդի հոգևոր հայրենիքը Հայաստանեայց եկեղեցին է: Այս հայրենիքի վերայ միայն կարող ենք հոգևորապէս աճել եւ զարգանալ, ինչպէս որոշ կլիմայի եւ տեղին յատուկ բոյսն ու կենդանին՝ իւր հայրենիքում: Մեր անցեալն ուրանալ չենք կարող, եթէ տգիտութեան եւ միակողմանի հասկացութեան թանձր մառախուղը չէ նստել մեր հոգու վերայ: Յառաջադիմութիւնը շղթաների կապակցութիւն է. նոր օղակը պէտք է կապուի հնի հետ եւ այսպէս շարունակուի անընդհատ....: Նոր եւ ժամանակի պահանջների համեմատ քաղաքակրթութիւն ստեղծելու համար՝ պէտք է մեր նախնեաց հոգիները մեզ գործակից լինեն, հայոց հայրապետների եւ վարդապետների հատընտիր շարքերը, հայրենիքի անձնուէր նահատակները պէտք է յարութիւն առնեն մեր հոգու մէջ եւ խրախոյս հանդիսանան վերածնութեան, մի պայծառ եւ վսեմ քաղաքակրթական կեանքի նորոգման: Հայ կեանքի հետ կապուած գիտութիւնները՝ ազգային եւ եկեղեցական պատմութիւններն ու մատենագրութիւնները, հնախօսութիւնները հիմնուած են անցեալի ուսումնասիրութեան վերայ: Հայոց նոր արուեստ ու քաղաքակրթութիւն ծագել եւ ազգային դրոշմ ու գոյն կարող է ստանալ միայն նախնեաց արուեստի եւ քաղաքակրթութեան ուսումնասիրութեամբ: Այստեղից է ծագում ազգային այն բարձր գիտակցութիւնը, որ գոյութեան պահպանութեան եւ յառաջադիմութեան գրաւականն է»:

➥ *էջ 4, 8*

Հանուն Եկեղեցու. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի գիտական աշխատանքի համատեքստը

➥ էջ 3

Նրա ուսումնասիրությունները եկեղեցաբանական հիմք ունեն: Նա, ըստ էության, արվեստով զբաղվել է ոչ այնքան արվեստների հանդեպ իր սիրուց մղված, որքան Եկեղեցու հանդեպ իր սիրո պատճառով, որը կրոնական այդ արվեստն է ստեղծել: Նա նվիրված էր բանասիրությանը ոչ թե ձեռագրերի հանդեպ իր սիրո պատճառով, այլ առ Եկեղեցին սիրուց, որն ստեղծել է դրանք: Նմանապես նա հետաքրքրված էր եկեղեցական ճարտարապետությամբ՝ եկեղեցու շքեղության պատճառով: Այլ կերպ ասած՝ մենք պետք է համատեքստային դարձնենք նրա ուսումնասիրությունն իր եկեղեցաբանության մեջ, որը հենց նրա գիտական նվաճումների սկզբնարմատն է: Ավելին. նա հետամուտ էր գիտակցելով, որ Եկեղեցու անցյալից սովորելը պետք է նրա ապագա ուղղությանն ընթացք տա: Մեր անցյալի քաղաքակրթության կամ մշակույթի մեջ կրթված լինելը դառնում է մեր կողմնացույցը, երբ մենք շարժվում ենք զարգացող քաղաքակրթության հետ զուգընթաց: Անցյալի հետ այդ կապն այնքան էական է, որ առանց դրա՝ մենք կդառնանք աշխարհի ևս մեկ փոփոխված մասնիկ՝ կտրված այն շղթայից, որը կապում է մեզ իրար հետ և տալիս է մեր ինքնությունը:

Նույն՝ «Մեր հոգևոր Հայրենիքը» հոդվածում նա այլ տեսակետ ունի մեր կրոնական մշակույթի կամ քաղաքակրթության վերաբերյալ: Հովսեփյանը դա կապում է էթնիկ կամ ազգային Եկեղեցիների և Ընդհանրական Եկեղեցու բնական զանազանության հետ: Նրա համար դա էկումենիկ բանաձևի (ֆորմուլայի) մի մասն է, որովհետև ազգային Եկեղեցիները պետք է պահպանեն իրենց կրոնական սեփական մշակույթը՝ հարստացնելու Համընդհանուր Եկեղեցին, որի անբաժան մասն են իրենք: Նրանք պետք է իրենց ավանդն ունենան Ընդհանրական Եկեղեցու՝ ավելի մեծ մարմնի բարօրության գործում՝ իրենց սեփականը ներդնելով դրա մեջ: Դա նա ցույց տվեց Հայ Եկեղեցու մշակույթին վերաբերող իր ուսումնասիրություններով՝ հույս ունենալով այն հայտնի դարձնել քրիստոնեական մնացած աշխարհին:

Ուրեմն՝ ի՞նչ ունի Հայ Եկեղեցին՝ նպաստելու ավելի մեծ, Ընդհանրական Եկեղեցուն: Սկսենք Եկեղեցու քրիստոսաբանությունից: Ահա թե ինչու Հովսեփյանի վաղ ուսումնասիրությունները նվիրված էին Խոսրովիկ Թարգմանչին (մահ. մոտ 730 թ.)՝ ավարտելով վարդապետական ավարտաճառով կամ թեզով՝ հրատարակված 1899 թ.: Պատճառը, թե ինչու նա որոշեց անդրադառնալ Խոսրովիկին, պարզ է. ութերորդ դարասկզբի այս հեղինակը 451 թ. գումարված Քաղկեդոնի ժողովի վերաբերյալ Հայ Եկեղեցու հակազդեցության առաջնային և ամենավաղ կանոնավոր համակարգողն է: Խոսրովիկը գլխավոր աստվածաբանն էր 726 թ. Հովհան Օձնեցի կաթողիկոսի հրավիրած Մանազկերտի (Ապահունիք) երկրորդ ժողովի, որի ժամանակ Հայ Եկեղեցին ևս մեկ անգամ հակադարձեց Քաղկեդոնին և դատապարտեց մոնոֆիզիտական ծայրահեղականությունն իր բոլոր ձևերով. եվտիքիականություն՝ Եվտիքեսից հետո, Կոստանդնուպոլիսի արվարձաններից մեկի վարդապետը (մահ. մոտ 455 թ.), որը սովորեցնում էր, որ Քրիստոսն ուներ մեկ բնություն՝ միայն աստվածային, և հուլիանականություն՝ Հուլիանոսից հետո. Հալիկառնասի եպիսկոպոսը (մահ. մոտ 530 թ.), որը նույնպես ուսուցանում էր, որ Քրիստոսն ուներ մեկ բնություն՝ միայն աստվածային, և որ մարմնավորված Քրիստոսի մարմինը ենթակա չէ մահվան կամ ապականության՝ այդպիսով հանգեցնելով աֆթարդոկտեիզմի վարդապետությանը (հայ.՝ երևութականություն): Այս վարդապետություններին հակադրվեց լուսապատկերի հակառակ ծայրում գտնվող ևս մեկ ծայրահեղական՝ Սևերոսը՝ Անտիոքի պատրիարքը (մահ. 538 թ.), դատապարտված մոնոֆիզիտ, որն ուսուցանում էր, որ փրկության վարդապետությունն անիմաստ է, եթե Քրիստոսի մարմինն ամբողջովին մարդկային է: Խոսրովիկն արտահայտում է Հայ Եկեղեցու դիրքորոշումը՝ դատապարտելով երկու ծայրահեղությունները: Առաջին հերթին՝ նրա քրիստոսաբանական դիրքորոշումն այն է, որ ոչ քաղկեդոնական շեշտը չպետք է լինի Քրիստոսի մեկ բնության վրա («ըստ բնութեան մի բնութիւն», քանի որ ոչ ոք չի կարող ժխտել, որ Քրիստոսում երկու բնություն կա), այլ ավելի շուտ երկուսի միության անմեկնելիության վրա («ըստ անճառ միաւորութեան»), այսինքն՝ Քրիստոսի մեջ երկու բնությունների միությունը կամ միաձուլումը խորհուրդ է, որը բացատրելի չէ: Ինչ վերաբերում է հուլիանականների դատապարտմանը, որոնք մշտապես կապված են աֆթարդոկտեիզմի հետ, նա եզրակացնում է, որ այս հերետիկոսությունները և մյուսները ծագում են Քրիստոսի երկու բնություններից մեկի կամ մյուսի վրա կենտրոնանալու արդյունքում:

Գարեգին Ա Հովսեփյան (1867–1952)

Նկատի ունենալով Հովսեփյանի նվիրվածությունն արվեստին և գիտությանը՝ ես կցանկանայի նախ ուշադրություն հրավիրել հայկական մանրանկարչության ուսումնասիրության մեջ նրա ունեցած ավանդին: Նա առաջիններից էր, ով առաջարկեց գրական աղբյուրների կարևորությունը պատկերագրության մեջ՝ վերծանման համար, օրինակ, Հայոց Հայսմավուրքի (Synaxarion) սրբախոսությունները կարող են օգնել մեկնաբանել սրբերի, հատկապես 12 առաքյալների և մասնավորաբար 4 ավետարանիչների դիմանկարները: Թե ինչո՞ւ կարելի է Հայսմավուրքին անդրադառնալ, ես չեմ կարող չմեջբերել այս աղբյուրից մի պարբերություն Մարկոս ավետարանչի վերաբերյալ. «Սուրբ Մարկոսը միջին հասակի էր, ոչ բավականին բարձրահասակ, ոչ շատ ցածր կամ փոքր չափսերով, այլ չափազանց գեղեցիկ և վայելչահասակ, կատարյալ: Նա սկսում էր ծերանալ, բայց դեռ շատ ծեր չէր, թեև մարմնով ավելի շատ էր մաշված, քան դեմքով: Նա գեղեցիկ դեմք ուներ, դուրս ցցված քիթ (երկայնաքիթ), մեծ քթանցքներ: Եվ նա աննկատ չէր, քանի որ, թվում է, թե կարճահասակ էր: Նա մեծ գլուխ ուներ, բայց լավ դիմագծերով՝ դեմքի նուրբ մազեր, գեղեցիկ, ուղղահայաց աչքեր, սերտորեն հյուսված հոնքեր, լայն ճակատ, համարյա ճաղատություն, հաստ մորուք....»:

Վիմագրագիտությունը (էպիգրաֆիա) նրա հետաքրքրությունների և գիտական զբաղմունքների սիրելի մեկ այլ ոլորտ էր: Անհի արձանագրություններն արդեն ուսումնասիրել էր հայտնի վիմագրագետ Նիկողայոս Մառը: Հետևաբար Հովսեփյան կաթողիկոսն իր ուշադրությունը սևեռել է Հաղպատի, Սանահինի և Գեղարդի արձանագրություններին: Նա բացառիկորեն լավ էր կարդում կցագրերը և վերծանում վատ պահպանված արձանագրությունները: Հետո նա իր ուշադրությունը սեպեց հնագրության (պալեոգրաֆիայի) վրա՝ քարից անցնելով մագաղաթին: Սա նաև այն ժամանակաշրջանն էր, երբ նա սկսեց գնահատել հիշատակարանների (կոլոֆոն) պատմական նշանակությունը, որտեղ միջնադարյան գրիչները նշում էին նրանց և ձեռագրեր ստացողների անունները, որոնց համար դրանք ընդօրինակվել էին՝ մաղթանքներով և աղոթքներով հիշատակելով ինչպես ողջերին, այնպես էլ մահացածներին: Որոշ գրիչներ շարունակեցին պատմել այն հանգամանքները, որոնցում նրանք աշխատել են, հիմնական իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել իրենց աշխատանքի ընթացքում՝ հաճախ խորանալով մանրամասների մեջ: Տասնամյակների նրա հետաքրքրությունն այս բնագավառի հանդեպ գագաթնակետին հասավ նրա կոթողային երկասիրության մեջ, որը հայկական հիշատակարանների վերաբերյալ նրա մեծածավալ աշխատանքն է:

Ոչ ոք այնքան հստակորեն ցույց չի տվել հիշատակարանների պատմական արժեքը, որքան կաթողիկոս Հովսեփյանը: Հիշատակարանների մասին նրա աշխատությունը նախատեսված էր չորս հատորով (միայն մեկը լույս տեսավ՝ 1951 թ. Անթիլիասում. այն ներառում է հինգերորդ դարից մինչև 1250 թվականը): Հատորը բաղկացած էր 1255 սյունակ-էջից և պարունակում էր 472 հիշատակարան՝ 48 նկարազարդումով: Այն հրատարակվել է նրա մահից ընդամենը մեկ տարի առաջ: Նրա գնահատմամբ՝ այս հիշատակարանները նույնքան կարևոր են, որքան ցանկացած պատմական աղբյուր՝ պատմության վերակառուցման համար. իրականում, որպես ականատեսների վկայություններ, նրանց նկարագրած իրադարձություններին զուգահեռ՝ դրանք ավելի մեծ արժեք ունեն որպես առաջնային աղբյուրներ, քան ավելի ուշ շրջանի պատմագետների կարծիքները: Նա դրանք համեմատում է խճանկարների փոքրիկ կտորների հետ, որոնք, ժամանակագրորեն և աշխարհագրորեն խմբավորվելով, օգնում են վերականգնել պատմության ամբողջ նյութը:

Փաստորեն՝ ամենավաղ հիշատակարաններից մեկը՝ հմ. 2, արվել է 6-րդ դարում Բագրևանդում հիմնադրված մի վանքում: Այն մեր վաղ հայկական վանականության հիմնական վավերագրական վկայություններից մեկն է և հազվադեպ է հաշվի առնվում Հայաստանում վաղ համայնական (coenobitic) վանականության պատմությունը դիտարկելիս: Այս հին հիշատակարանը պահպանվում է մեծ Ճառընտիրի չորս ձեռագրերի մեջ՝ ընդօրինակված Երուսաղեմում 1417–1419 թթ., և պահվում է այնտեղ՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց հայկական վանքում (ձեռ. 1ա-դ): Հիշատակարանը պատմում է Հովհաննես Բ Գաբեղենացի կաթողիկոսի օրոք (557–574 թթ.) Բագրևանդի Գտկայ վանք անունով մի վանքի հիմնադրման մասին (Սբ. Վարասի վանք՝ Գտուկ մականունով, քանի որ նրան անհայտության մեջ մահանալուց հետո «հայտնաբերեցին»)՝ Սուրբ Թորոսի եղբոր՝ Սուրբ Թաթուլի և վերջինիս իրավահաջորդի՝ Թումասի աճյունների վրա: Հիշատակարանը, այսպիսով, ավելացնում է Սուրբ Թաթուլի հաստատած վանական կարգի պատմական հավաստիությունը, որի կանոնը գոյություն ունի: Նույն հիշատակարանից տեղեկանում ենք նաև, որ Սուրբ Վարդանը Զուրա անունով որդի է ունեցել, որն իր հետ նահատակվել է: Ո՛չ Եղիշեն, ո՛չ Ղազար Փարպեցին այս մասին չեն հիշատակում Վարդանանց պատերազմի մասին իրենց պատմություններում:

Առանց հիշատակարանային նյութերի՝ մենք չէինք իմանա Սուրբ Գրիգոր Տաթևացու և նրա դաստիարակ Սուրբ Հովհաննես Որոտնեցու ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների մասին, կամ որ Տաթևացին նաև հմուտ գրիչ էր, ինչպես նաև ձեռագրեր նկարազարդող: Մենք լավ գիտենք Սարգիս Պիծակի և Թորոս Ռոսլինի նման մեծ մանրանկարիչների անունները. վերջինս իր ստորագրությունը թողել է յոթ ձեռագրերի հիշատակարաններում, որոնք հիմնականում Ավետարաններ են՝ գրված Հոմկլայում 1256–1268 թթ.: Իսկ ի՞նչ կասենք ավելի վաղ հայերեն ձեռագրերի նկարազարդողների մասին: Նրանց մասին մենք իմանում ենք հիշատակարաններից: Երկու ամենավաղ հայկական Ավետարանների նկարազարդողների անունները մեզ հայտնի են՝ Գրիգոր Ակոռեցի (Մ. Մատենադարանի ձեռ. 311) և Հովհաննես Սանդղկավանեցի (Մ. Մատենադարանի ձեռ. 3793), երկուսն էլ տասնմեկերորդ դարում են ապրել:

Ինչպես տեսանք, հիշատակարանները պատմական տեղեկատվության արժեքավոր աղբյուրներ են և մեծ հաշվով բավականաչափ ուսումնասիրված չեն: Դրանք ուսումնասիրելու համար շատ հանգուցային (ինտրիգային) և յուրօրինակ գրական ժանր են՝ նույնիսկ առանց դրանցից պատմական տեղեկություններ քաղելու, պարզապես որպես գրական ժանր: Հիշատակարանների՝ որպես գրական ժանրի վերաբերյալ ընդհանուր ուսումնասիրություններ չկան: Այս բնագավառի նկատմամբ գիտական հետաքրքրությունը մեծացնելու համար թույլ տվեք մի փոքր ավելին ասել հիշատակարանների մասին: Ամեն ձեռագիր չէ, որ պարունակում է հիշատակարան, բայց շատերը պարունակում են մեկից ավելի հիշատակարաններ: Երբեմն գրիչները նաև կրկնօրինակում են իրենց բնօրինակ-հիշատակարանը: Այսպիսով՝ թեև ձեռագիրն ավելի նոր է, արտագրված տողերի հնությունը չափազանց կարևոր է. այն օգնում է հետևել բնագրի փոխանցման պատմությանը (նշելով, որ այն սերում է ավելի հին ձեռագրից, որը կարող է այլևս գոյություն չունենալ, ինչպես հաճախ լինում է): Հիշատակարանները նաև պատմում են, թե արդյո՞ք որևէ ձեռագիր ընդօրինակել է մեկից ավելի գրիչ: Արդարացիորեն կարող ենք պնդել, որ աշակերտները հաճախ կրկնօրինակում էին իրենց ուսուցիչների գործերը՝ նշելով տարեթվերը, որոնք հեռու չեն բնօրինակ գործերից. կամ որ հեղինակները մեզ թողել են իրենց ինքնագրերը (օրինակ՝ Մխիթար Այրիվանեցու, Ներսես Լամբրոնացու, Հովհաննես Երզնկացու և Սուրբ Գրիգոր Տաթևացու ձեռագրերը): Սուրբ Գրիգոր Նարեկացու թողած չորս հիշատակարանները նրա մասին կենսագրական սկզբնաղբյուրներն են, մնացածն առասպել է:

Հիշատակարաններում կրկնօրինակման տարեթվից և վայրից ավելին կա: Հիշատակարանների նշած տարածաշրջանային և ժամանակագրական որոշ օրինաչափություններ կարող են տալ տվյալ վայրի մի ամբողջ պատմություն: Այնտեղ մի ամբողջ պատմություն կա, որը մնում է երևի գրել «Հիշատակարանապատում Հայոց» վերնագրի ներքո:

Կաթողիկոս Հովսեփյանը գերազանց պատմաբան էր, և դարձյալ նրա հետաքրքրությունը սոսկ պատմության հանդեպ սիրուց չէր: Պարզապես նկատի առեք նրա մեծ աշխատությունը Խաղբակյանների և կամ Պռոշյանների մասին: Միջնադարյան իշխանական այս երկու հարստությունները, որոնք ի վերջո միավորվեցին, իշխում էին ներկայիս Հայաստանի տարածքի զգալի մասում 11-րդ դարի դրությամբ (մինչև 18-րդ դ.)՝ Կեչառիսի, Այրիվանքի (Գեղարդ) և Գլաձորի (դեպի հարավ՝ Տաթև) շրջանները: ➥ էջ 8

Գրիգոր Գ Պահլավունին հայոց կաթողիկոս.
կաթողիկոսարանի տեղափոխումը Հռոմկլա

1113 թ. Շուղրի Կարմիր վանքում տեղի ունեցավ մի կարևոր եկեղեցաժողով, որտեղ պետք է քննվեր հայոց նոր կաթողիկոսի ընտրության հարցը: Նշյալ ժողովը հայոց կաթողիկոս է ընտրում Գրիգոր Բ Վկայասերի քրոջ թոռ Գրիգոր Գ Պահլավունուն (1113–1166), որը ղեկավարեց Հայոց Եկեղեցին բավական երկար ժամանակ՝ 53 տարի: Նա ժամանակին իր ուսումն ստացել էր հենց Քեսունի Կարմիր վանքում և դառնալով կաթողիկոս՝ շարունակեց Պահլավունի հայրապետների եկեղեցական քաղաքականությունը: Պատմիչ Մատթեոս Ուռհայեցին 1113 թ. Գրիգոր Գ-ի օծման մասին գրելիս շեշտում է նրա վաղ տարիքը՝ միաժամանակ նշելով, որ նա Վասակ Պահլավունու որդի Գրիգոր Մագիստրոսի տոհմից էր. «Յայսմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեանն Տանն Հայոց տէր Գրիգորիս որդի Ապիրատին, որ էր յազգէ Գրիգոր Մագիստրոսին՝ որդւոյ Վասակայ Պահլաւունւոյ, վասն զի զկնի մահուանն Տեառն Բարսեղի եղեւ ժողով եպիսկոպոսաց եւ հարանց ի Կարմիր վանքն՝ մերձ Քեսուն գաւառ՝ եւ.... ի նմին աւուր տան զձեռնադրութիւն կաթուղիկոսութեանն ի վերայ աթոռոյ սրբոյն Գրիգորի. եւ նստաւ ի հայրապետական աթոռն մինչ էր ի տղայութեան հասակին, վասն զի չեւ եւս էր լեալ ի սկիզբէն մօրուացն....»:

Թեև 1113 թ. ժողովը Գրիգոր Գ Պահլավունուն ընտրեց հայրապետ, և նրա իշխանությունը ճանաչեց թեմերի ճնշող մեծամասնությունը, այնուամենայնիվ Աղթամարի Դավիթ Թոռնիկյան եպիսկոպոսը պատրվակ դարձրեց այն հանգամանքը, որ Գրիգոր Գ Պահլավունին շատ երիտասարդ է, ուստի Վան քաղաքից ոչ հեռու գտնվող Ձորավանքում իր կողմնակից հինգ եպիսկոպոսների կողմից հռչակվեց կաթողիկոս, ինչը բնականաբար բացասական կերպով ընդունեցին հայ հոգևորականները: Դավիթ Աղթամարցու իշխանությունը տարածվում էր միայն Վան քաղաքի և շրջակայքի վրա: Ինքնահռչակ աթոռն ամրապնդելու նպատակով Դավիթը նամակներով դիմեց հայ բարձրաստիճան հոգևորականներին: Նա մեծ հույսեր ուներ իր կողմը գրավելու Անին: Պատմիչ Վարդան Արևելցին գրում է, որ Դավիթը մեծ ջանքեր գործադրեց իր կողմը գրավելու Անիի հոգևորականներին՝ «ընծայիւք և աղաչանօք», սակայն արդյունքի չի հասել: Անիի հոգևոր հայրերը չէին ցանկանում հայության հոգևոր կենտրոնի առաջնությունը վերապահել Աղթամարին: Մի պահ նրա հանդեպ համակրանք ցուցաբերեցին Սյունյաց և Արտազի եպիսկոպոսները, սակայն մեկ տարի անց եկեղեցական ավանդույթները և Գրիգոր կաթողիկոսի դիրքերի ուժեղանալը ստիպեցին նրանց խզել հարաբերությունները հակաթոռ կաթողիկոսի հետ:

1114 թ. հայոց հոգևոր առաջնորդները ժողով գումարեցին Կարմիր վանքում, որին մասնակցում էին մեծ թվով եպիսկոպոսներ, վանականներ, իշխաններ ինչպես Մեծ Հայքի, այնպես էլ նրանից դուրս գտնվող հայահոծ շրջաններից՝ 2500 հոգի: Ժողովը քննեց Դավիթ Աղթամարցու ինքնակոչ գործունեությունը, դատապարտեց նրան, մերժեց նրա կաթողիկոսությունը և օրինական կաթողիկոս ճանաչեց Գրիգոր Գ Պահլավունուն: Մ. Չամչյանի վկայակոչմամբ՝ նշյալ ժողովը մշակեց և ընդունեց հայոց կաթողիկոսների ընտրության նոր կարգ, ըստ որի՝ հայրապետական աթոռը մնում է հայրենիքից դուրս, բայց ամեն մի կաթողիկոսի ընտրություն պետք է հավանության արժանանա հայաստանյան չորս եպիսկոպոսական աթոռների կողմից՝ Բջնիի, Հաղպատի, Տաթևի և Արտազի: Թե՛ Վասիլ Կամսարականը, որի տիրույթներում գումարվել էր վերոնշյալ ժողովը և թե՛ Թորոս Ռուբինյանն ու մյուս իշխանները, որոնք իշխանություն ունեին Կիլիկիայում և նրան հարող շրջաններում, բոլորովին մտադիր չէին թույլ տալ, որ հայրապետական աթոռը իրենց տիրույթներից տեղափոխվի Վասպուրական: Ժողովականները արևելյան մասի հոգևորականներին

Գրիգոր Գ Պահլավունի (1113—1166)

գրավոր իրազեկեցին իրենց որոշման մասին՝ նշելով, որ Գրիգոր Գ կաթողիկոսի դեռահաս տարիքը չի կարող խոչընդոտել նրա հովվապետությանը:

Ինչ վերաբերում է Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությանը (1113–1895), ապա պետք է նշել, որ այն չվերացավ և երկար ժամանակ պահպանեց իր գոյությունը: Նրա հոգևոր իշխանությունը պահպանվեց սոսկ Վասպուրականի մի մասում և Մոկքում: Եթե խորը մոտենանք խնդրին, ապա կտեսնենք, որ Դավիթ Թոռնիկյանի պառակտիչ քայլը սոսկ նրա մեծ հավակնությունների արդյունք չէր, այլ Մեծ Հայքի և նորաստեղծ հայկական պետության մրցակցության արտահայտություն: Եվ քանի որ նորաստեղծ պետությունը կառավարվում էր հայ անկախ իշխանների կողմից, իսկ Մեծ Հայքը գտնվում էր օտար նվաճողների իշխանության տակ, ապա առաջինի ազդեցությունը գնալով մեծանում էր՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով նրա հոգևորականության համար, չնայած ավանդական իրավունքը, անկասկած, Մեծ Հայքի հոգևորականության կողմն էր: Վերը նշյալ ժողովը հայ եկեղեցական կենտրոններին խստիվ արգելում էր որևէ շփում ունենալ Աղթամարի կաթողիկոսության հետ:

1115 թ. Քեսունի իշխանության կործանումից հետո քաղաքն ընկավ խաչակիրների ձեռքը: Գրիգոր Գ Պահլավունին որոշեց 1116 թվականին հայրապետական աթոռը տեղափոխել Ծովքի դղյակը (1116–1149) : Հայտնի է, որ դեռևս 1120-ական թվականներին Գրիգոր Գ Պահլավունին փորձեց կաթողիկոսական աթոռը վերահաստատել Անիում, ինչի մասին խոսում է Սամվել Անեցի պատմիչը: Կաթողիկոսը նույնիսկ պայմանավորվածություն ուներ քաղաքի Շադդադյան ամիր Աբուլ-Ասվարի հետ, սակայն քաղաքական իրադարձությունները՝ մասնավորապես 1124–1126 թթ. քաղաքի գրավումը վրաց թագավորության կողմից, խափանեցին այս ծրագիրը:

Ցավոք, միջնադարի հայ և օտարազգի պատմիչները բավական տեղեկություններ մեզ չեն հաղորդում Ծովքի հայոց կաթողիկոսարանի գործունեության մասին: Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի աթոռակալման տարիներին քույր Եկեղեցիների միջև նոր շարժում սկսվեց:

Հայտնի է նաև, որ Գրիգոր Գ Պահլավունին, 1141 թ. իր եղբոր՝ Ներսես Շնորհալու հետ ստանալով հրավեր, մասնակցել է Անտիոքի եկեղեցական ժողովին: Այդ ժողովից են առավել ակտիվացել հայ-կաթոլիկ եկեղեցական հարաբերությունները, որոնք, ինչպես գիտենք, շարունակվեցին նաև հետագա դարերում՝ մասնավորապես 13–14-րդ դդ., երբ Կիլիկիայի հայկական թագավորությունը կարիք ուներ ռազմական օգնություն ստանալու Արևմուտքի երկրներից:

Վերոնշյալ ժողովը տեղի էր ունեցել Հռոմի պապի նվիրակ կարդինալ Ալբերիկոսի նախագահությամբ: Ժողովից հետո Ալբերիկոսի հրավերով հայոց կաթողիկոսն այցելեց Երուսաղեմ, և այնտեղ կաթոլիկ կարդինալն առաջին անգամ առաջարկեց Հռոմի Եկեղեցու հետ միություն հաստատել: Գրիգոր Գ Պահլավունին, ի պատասխան այդ առաջարկության, հայտարարեց, թե ինքը երկու Եկեղեցիներն իրարից բաժանող էական կետեր չի տեսնում: Դրանից որոշ ժամանակ անց Ինոկենտիոս Բ պապի (1130–1143) և Գրիգոր Գ Պահլավունու միջև նվերների փոխանակություն տեղի ունեցավ, իսկ քիչ անց կրկին սկսվեցին վիճաբանություններ երկու Եկեղեցիների դավանական և ծիսական տարբերությունների շուրջ: Եվ ահա Եվգենիոս Գ պապը (1145–1153) գրություն ուղարկեց հայոց կաթողիկոսին՝ առաջարկելով, որ համակերպվի Հռոմի Եկեղեցու հետ և միանա նրանց: Գրիգոր Գ Պահլավունին պատասխան չտվեց այդ գրությանը, և այդպիսով ավարտվեց Հայոց և Հռոմի Եկեղեցիների միջև սկսված հարաբերությունների առաջին շրջանը:

Ինչպես տեսնում ենք, այդ պատմական ժամանակաշրջանը բավական բարդ էր Հայոց Եկեղեցու համար, քանի որ միաժամանակ նա պետք է պայքարեր թե՛ Բյուզանդական Եկեղեցու և թե՛ Հռոմի պապական աթոռի դավանաբանական ճնշումների դեմ:

Ծովքում հայոց կաթողիկոսարանը մնաց շուրջ 33 տարի՝ մինչև 12-րդ դարի կեսերը, երբ Գրիգոր Գ Պահլավունին հայրապետական աթոռը տեղափոխեց Հռոմկլա բերդաքաղաքը, որը ժամանակի ընթացքում դարձավ հայության ոչ միայն հոգևոր, այլև ուսումնագիտական կենտրոն: Այն վայելում էր Ռուբինյան իշխանապետերի համակրանքը և հովանավորությունը: Պետք է շեշտել նաև այն, որ չնայած կաթողիկոսարանը չհաստատվեց Անիում, այնուամենայնիվ Գրիգոր Գ Պահլավունին շարունակում էր սերտ կապեր պահպանել անեցիների հետ:



Հռոմկլա

Իսկ ինչ վերաբերում է Շուղրի Կարմիր վանքի դպրոցի գործունեությանը, ապա պետք է նշել, որ այս հաստատությունը կորցրեց իր երբեմնի հռչակը, քանի որ տեղի նշանավոր վարդապետների հետ փոխադրվեց նոր կենտրոն՝ Հռոմկլա:

Ինչո՞ւ Գրիգոր Գ Պահլավունին որոշեց կաթողիկոսարանը տեղափոխել Հռոմկլա, ո՞րն է կաթողիկոսարանի տեղափոխման իրական թվականը, և ինչ դեր կատարեց Հռոմկլայի կաթողիկոսարանը հայության և մասնավորապես Հայ եկեղեցու կյանքում:

Հայտնի է, որ ուսումնասիրողներից ոմանք հայրապետական աթոռի տեղափոխումը Հռոմկլա դիտում են որպես Ռուբինյանների կողմից հայկական պետականության ձևավորմանն ուղղված քայլ այնքանով, որ Հռոմկլայում կաթողիկոսությունն ազատվում էր Կ. Պոլսի պատրիարքության ազդեցությունից և ճնշումներից: Դրանով նաև հնարավոր էր դառնում «Եկեղեցին ներգրավել կառավարման համակարգում» և ուղղակի արդյունավետ վերահսկողություն սահմանել նրա գործունեության նկատմամբ, քանի որ Հռոմկլան վարչական առումով Հայաստանից դուրս էր: Այս իրադարձությունը չափազանց կարևոր էր հայ ժողովրդի կյանքում, քանի որ այս պատմական ժամանակաշրջանում, երբ հայությունը չուներ պետականություն, կաթողիկոսարանը նրան միավորող միակ իրավական իշխանությունն էր: Կաթողիկոսարանը վեր էր կանգնած Կիլիկիայում և այլուր իշխանության հասած հայկական իշխանական բոլոր տներից և երբեմն միջնորդ դատավորի դեր էր ստանձնում միմյանց դեմ կռվող հայ իշխանների միջև բորբոքված պառակտչական բախումները դադարեցնելու մտահոգությամբ: Եվ այս դրությունը թույլ էր տալիս նրան հանդես գալ ողջ ժողովրդի ապահովման դիրքից, միավորել հայկական իշխանությունների ուժերը՝ իրագործելու համար պետականությունը կորցրած հայության քաղաքական ձգտումները:

Կարևոր գործոն էր նաև այն, որ սելջուկ-թուրքերը, գրավելով Հայաստանը, շուտով շարժվում են դեպի արևմուտք: Ճիշտ է՝ հայ իշխանները կարողանում են ժամանակ առ ժամանակ լեզու գտնել նոր նվաճողների հետ և խաղաղ ապրել, սակայն մերթ ընդ մերթ այնտեղ էլ են բախումներ լինում, և վտանգ էր ստեղծվում Ծովքի կաթողիկոսական աթոռի համար: Հենց դա էր պատճառը, որ Գրիգոր Գ կաթողիկոսը և իր եղբայր Ներսես Շնորհալին որոշում են հայոց կաթողիկոսական աթոռը տեղափոխել առավել անվտանգ տարածք, որը տվյալ պահին ավելի շահեկան էր: Եվ, իրոք, հայոց կաթողիկոսի՝ Հռոմկլա տեղափոխման հարցում կարևոր դեր էր կատարել այն հանգամանքը, որ Ծովքի դղյակն այդքան ապահով և անվտանգ վայր չէր, շրջապատված էր թշնամիներով և այնքան էլ անառիկ չէր՝ ի տարբերություն Հռոմկլա բերդաքաղաքի, որի ընտրությունը շատ բարեհաջող էր կատարված:

Նշենք նաև, որ կաթողիկոսարանի տեղափոխման մասին խոսում են միջնադարի ճանաչված պատմիչներ Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Սմբատ Սպարապետը և ուրիշներ: Այսպես՝ պատմիչ Կիրակոս Գանձակեցին այդ մասին նշում է հետևյալը. «Փոխեաց զաթոռն հայրապետական ի բերդն, որ կոչի Հռոմկլայ....»: Դրան զուգահեռ Վարդան Արևելցին էլ ավելացնում է, որ «Յայն ժամանակի աթոռն Հայոց շրջեալ ի բազում վայրս՝ ի Կարմիր վանքն, ի Շուղրն, և ի Ծովքն, գնացեալ դադարէ ի Հռոմկլայն կոչեցեալ դղեակն....»: *Կաթողիկոսի Հռոմկլա տեղափոխման մասին մեզ առավել ընդգրկուն* տեղեկություններ է հաղորդում Կիլիկյան Հայաստանի հայտնի սպարապետ, օրենսդիր և պատմիչ Սմբատ Սպարապետը, ըստ որի՝ Գրիգոր Գ-ն սկզբնական շրջանում որոշում է գնալ Արևելք՝ պայմանավորվելու վրաց արքայի հետ՝ կաթողիկոսարանը Անի տեղափոխելու համար, որը որոշակի առումով անվտանգ կարող էր լինել: Ճանապարհին Գրիգոր Գ կաթողիկոսը հանդիպում է կոմս Ջոսլինի կնոջը՝ Բիաթրիսին, որն իմանալով կաթողիկոսի մտադրության մասին՝ խորհուրդ չի տալիս տեղափոխվել Անի, այլ առաջարկում է կաթողիկոսին գնել Հռոմկլան, որը շատ անառիկ բերդ էր՝ խոստանալով անհրաժեշտության դեպքում օգնության տրամադրում: ➥ էջ 7

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Արցախի Տող բնակավայրը և հոգևոր կառույցները

Տող գյուղը գտնվում է Արցախի Հանրապետության հարավարևելյան հատվածում՝ Հադրութի շրջանում՝ նախկին Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Տողասարի ստորոտում՝ Իշխանագետի աջ հովտում:

Տողն Արցախի հնագույն բնակավայրերից է, որի մասին գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակված է 2-րդ դարի հեղինակ Պտղոմեոսի՝ 1653 թ. Փարիզում և 1667 թ. Ամստերդամում տպագրված քարտեզներում (Sarkis Boghossian, 1987, էջ 22–23):

Անմատչելի բնակավայրի համբավը, ինչպես նաև առևտրական մայրուղիների վրա գտնվելու հանգամանքը նպաստում էին, որ Տողը դառնար միջնադարյան Արցախի իշխանանիստ կենտրոններից մեկը: Տող ավանն աննախադեպ վերելք ապրեց մելիք Եգանի կառավարման տարիներին (1716–1744): Դիզակի տեր մելիք Եգանյան-Ավանյանների տիրույթները ձգվում էին Դիզափայտ-Քիրս լեռնագոտուց մինչև Արաքս գետի հովիտները: Մելիքանիստն էր Տող ավանը:

Մելիք Եգանը, պարսից Նադիր շահից խանական տիտղոս ստանալով, գլխավորեց Խամսայի մելիքությունը: Պատմական բախտորոշ այս ժամանակաշրջանում մելիք Եգանի նման տաղանդավոր պետական-քաղաքական գործիչը, օգտագործելով Նադիրի հետ ունեցած իր ջերմ հարաբերությունները, հոգում էր ողջ Արևելյան Հայաստանի հոգսերը: Դրա մասին է վկայում Տողի մելիքական ապարանքի ճակատին մելիք Եգանի թողած վիմագիր-պատգամը. «Ես թողեցի ոչ Հայաստանաս եսիր տալու»: Մելիք Եգանի արժանավոր ժառանգորդները դարձան նրա որդիներ Արամը և մելիք Եսային: Վերջինիս՝ թուրքերի դեմ տարած փայլուն հաղթանակների շնորհիվ Նադիրը նրան տվեց «սուլթան» տիտղոսը: Փաստորեն՝ 18-րդ դարի կեսերին՝ պատմական բախտորոշ այդ ժամանակահատվածում, Արցախի քաղաքական պետական առաջնորդիչ ուժը Գանձասարից և Շուշիից տեղափոխվեց Տող:

Տողում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Գտիչ (Քթիշ) բերդը (9–13-րդ դար), Թեժ եկեղեցին (9-րդ դար), Գտչավանքը (1241–1246 թթ.), Սբ. Հովհաննես եկեղեցին (1736 թ.), Սբ. Ստեփանոս եկեղեցին (1747 թ.), մելիքական ապարանք (1738 թ.), Խաչս Վարդան կամ Ապարանք եկեղեցին (1737 թ.): Կարծիք կա, որ Տողի եկեղեցիներից երկուսը կառուցված են հեթանոսական տաճարների հիմքերի վրա:

Ընդհանուր առմամբ այստեղ հաշվառված և պետական ցուցակներում ներառված է պատմական 97 հուշարձան:

Թեժ եկեղեցի

Տեղադրված է Գտիչ լեռան գագաթին: Մուտքը հյուսիս-արևմուտքից է, վերնամասում առկա է փոքրիկ լուսամուտ: Բացառությամբ ժայռամերձ տարածքի՝ եկեղեցին շրջապատված է եղել պատով: Քթիշ բերդի պաշտպանության հետ կապված՝ ուշագրավ պատումներ են պահպանվել հիշյալ եկեղեցու կառուցման մասին:

9-րդ դարի առաջին կեսին արաբական խալիֆայության խառնակ վիճակը նպաստեց նրա տիրապետության տակ ընկած երկրների ներսում նոր խմորումների առաջացմանը, որոնք բոլորն էլ ինքնավարության էին ձգտում: Հայաստանում առանձնապես վերելք էր ապրում Բագրատունյաց նախարարական տունը, որը 9-րդ դարի կեսերից սկսած՝ նույնիսկ հրաժարվում էր արաբներին հարկ վճարելուց: Իսկ Հայաստանի հյուսիսարևելյան նահանգներում սյունեցիները և Ուտիքի ու Արցախի նախարարական տները դարձել էին իրենց երկրամասերի լիիրավ տերերը: Մութավաքիլ խալիֆը (847–861 թթ.) բիրտ միջոցների դիմեց Հայաստանի ներքին ինքնավարությանը վերջ տալու համար:

854 թ. խալիֆն արաբական զորքի՝ ազգությամբ թուրք զորահրամանատար Բուղա Շարաբիի գլխավորությամբ 200 հազարանոց մի զորաբանակ ուղարկեց Հայաստան և Անդրկովկաս: Բուղան արյան մեջ խեղդեց Սասունը, Վասպուրականը, Ռշտունիքն ու Մոկքը: Հայկական այս նահանգների բախտին արժանացավ նաև Արևելյան Վրաստանը՝ Տփղիս մայրաքաղաքով: Եվ միայն Կովկասյան լեռնաշղթայի փեշերին՝ Կախեթում բնակվող ծանարները սաստիկ ջարդ տվեցին Բուղային, որն ստիպված եղավ ամոթով փախչել պատերազմի դաշտից:

Կախեթից Բուղան ուղղվեց դեպի Գուգարաց դաշտ և իջավ Պարտավ քաղաքը, Կուրից հյուսիս մտավ Հայաստանի արևելյան կողմերը՝ Ուտիք-Արցախ լեռնաշխարհը: Ձերբակալվեցին Գարդմանի Կտրիճ իշխանը, Խաչենի Ատրներսեհն իր հոր՝ Սահլ Սմբատյանի հետ, լեռնային Ուտիքի Սևորդիների Ստեփանոս Կոն իշխանը: Բուղայի արնածարավ բանակի թափը կոտրվեց Դիզակում:

Հենվելով իր բերդերի անմատչելիության և առավելապես իր քաջ զինվորականության վրա՝ Դիզակի Աբու-Մուսե իշխանը վճռեց դիմադրություն ցույց տալ Բուղային: Լեռնային Քթիշ (Գտիչ) ամրոցում հավաքվեց Եսայի իշխանի ոչ միայն զորքը, այլև շրջակա գյուղերի ժողովուրդը: Եսայի իշխանն սկսում է եռանդուն պատրաստություններ տեսնել: Աղբյուրները վկայում են, որ Եսային քահանայի որդի էր, անվեհեր կռվող էր և չի պարտվել ոչ մի պատերազմում: Բուղան հայ իշխանից պահանջում է գալ իր մոտ և հնազանդություն հայտնել: Եսային պատասխանում է նրան նամակով, որը ամենայն մանրամասներով վկայակոչել է Թովմա Արծրունին. «Աշխարհակալների սովորությունն է արքունի հոգածությամբ գնալ երկիրը, իբրև հնազանդների մոտ, վերցնել, թեթևացնել տառապյալների նեղությունները, իբրև խնամարկուներ, և ոչ թե ավազակաբար ավերել, սրածելով ու գերեվարությամբ ավերակ դարձնել երկիրը: Եվ եթե դու արքունիքից եկել էիր խաղաղությունը պահպանելու, շենություն պիտի պարգևեիր սրանց և ոչ թե ավերանք ու խառնակություն: Եվ արդ թող հայտնի լինի, որ ինչքան բավականանա իմ զորությունը, և քանի դեռ կենդանի եմ, կընդդիմակայեմ տեր աստծո ուժով ու զորությամբ և քեզ տեսնելու եմ ոչ թե սիրով ու խաղաղությամբ, այլ զենքով, աղեղով ու սրով, քաջ տղամարդկանցով և ընտիր երիվարներով: Եվ եթե դու ցանկանում ես ապրեցնել քեզ ու քո զորքը, արի ել այստեղից ու դուրս գնա՛ իմ երկրի սահմաններից: Ապա թե ջանաս զրկվել այս կյանքից՝ քո զայրույթի, կատաղության պատճառով և ոսկորներդ ցրես անապատներում ու դառնաս երկրի գազանների, երկնքի թռչունների կերակուր, քո կամքը թող լինի, ես անպարտ եմ քո արյան համար, մանավանդ որ մեծ բարեպաշտություն եմ համարում սպանել աստծո թշնամիներին, ինչպես Մովսեսն Ամաղեկին, Հեսուն քանանացիներին, Սամուելն Ագագին և Դավիթը Գողիաթին, նաև ինչպես իսրայելացիներն սպանեցին այլազգիներին: Եվ աստված սիրեց նրանց: Նույն կերպ կանեմ քեզ և քո զորքի հետ: Արդ չեմ կամենում երկար խոսել քեզ հետ, քո ձեռքերում են խաղաղությունն ու խառնակությունը: Եթե, ինչպես ասացի, հեռանաս ինձանից, խաղաղություն կլինի, իսկ եթե ոչ՝ պատերազմ, կռիվ ու ճակատամարտ: Դու կդառնաս թիրախ, իսկ իմ աղեղը՝ խոցոտող, դու՝ ախոյան, իմ զինվորները՝ հաղթանակող, դու՝ ոսոխ, իսկ իմ զորքը քեզ դատապարտող, քո պատերազմը և մեր հաղթությունը, քո մարմինը և իմ նիզակը, քո պարանոցը և իմ սուրը, քո ստացվածքը՝ մենք նրա ժառանգորդ, քո ավարը՝ մենք ավարառուներ, դու ավազակ, մենք կողոպտիչներ, դու եղեգն, մենք դյուրավառ կրակ, դու հարդ, իսկ մենք դյուրությամբ փչող քամի, դու ծաղիկ, իսկ մենք թարշամեցնող խորշակ, դու պտղալից հանդ, մենք ապականող կարկուտ, դու շինվածք առանց հիման, իսկ ես հիմնիվեր տապալող հեղեղ, դու լեշ, իմ զորքը հոշոտող գազան, որ պատառոտում է քո սրտի առագաստը, դու խաղալիք, իսկ մենք մանուկներ, որ բռնելով քո զորությունը, խաղում, կատակում ենք քեզ հետ և քո այդ ողջ հպարտության ու անբարեհաճության հետ, դու վայրի երե, մենք՝ որսորդներ, դու թռչուն, իսկ մենք բարձրությունից ցած ենք իջեցնում և ձգում որոգայթի մեջ, դու ծովի վիշապ, մենք՝ կարթ, քո քիմքից վեր ենք ձգում քեզ անդունդների խորքից. դու իբրև եղջերու առանց եղջյուրների, մենք արծիվներ քո վերևում, քո աչքերը կուրացնողներ, որ քո լեշը գցում ենք մեր ձագերին և խորշերում բնակվող աղվեսներին: Եվ մինչև որ քեզ վրա չվերցնես այն, ինչ խոսեցի քո պատգամավորների հետ ու ավելի ջանաս վտանգել մեզ՝ դու կընդունես վտանգավորը»:

Բուղան, պարզ ընկալելով լեռնցի իշխանի շիտակ խոսքը, լրջորեն նախապատրաստվեց բերդի գրավմանը. պատնեշներ կանգնեցրեց ամրոցի դեմ, քարակույտեր շինեց, տեղակայեց քարաձիգ մեքենաներ: Բերդապահ զինվորականությունը և խաղաղ բնակչությունը հայտնվեցին խուլ պաշարման օղակում: Այդպիսով՝ պաշարումը տևեց մոտ մեկ տարի: Այդ ընթացքում Բուղան 28 անգամ գրոհել է բերդի վրա և ամեն անգամ խայտառակ պարտություն կրելով՝ հետ նահանջել: Պաշարումը երկարաձգելու համար Բուղայի զորականները ամրոցի շրջակայքում իրենց համար վրանաբնակ մի բնակավայր կառուցեցին: Թովմա Արծրունին հիշատակում է, որ Բուղան, այդ անհաջողություններից հուսալքված, փակվում է իր վրանում և տասն օր ոչ ոքի չի ընդունում: Սարսափելով լեռնցների գրոհներից՝ նա իր վրանը շրջապատում է բազմաթիվ զորագնդերով: Բուղայի բանակում գտնվող դավաճան հայ նախարարներից մեկը՝ Սմբատ սպարապետը, սիրտ է անում մտնել հուսահատված հրամանատարի մոտ՝ սփոփելու նրան: Խալիֆը Բուղայից պահանջում է հաշվեհարդար տեսնել ամրոցի պաշտպանների նկատմամբ: Պատերազմական գործողությունները վերսկսվում են նոր թափով: Վերջին հարձակմանը մասնակցում էր արաբական ողջ զորքը:

Թեժ եկեղեցի, 13-րդ դար

Տեղի է ունենում ահեղ ընդհարում, ինչից խորապես տպավորված՝ Սմբատ սպարապետի որդի Մուշեղը մի բանաստեղծություն է գրում՝ այդ օրը նմանեցնելով Քրիստոսի երկրորդ գալստյանն ու ահեղ դատաստանին: Աբու Մուսեի քաջավարժ զորքն առանց շտապելու հակահարձակման է անցնում և թշնամուն քշում բերդի պարիսպներից այն կողմ: Բուղան այս անգամ էլ է պարտություն կրում: Գտիչի պաշտպանները մեծաքանակ ավարով վերադառնում են իրենց ամրոցը: Ամենից զարմանալին ու հետաքրքիրն այն է, որ բերդի պաշտպանները նման դժոխային պայմաններում Բուղային կործանած Գտչավանքի փոխարեն կառուցում են նոր եկեղեցի: Քանի որ սրբավայրի կառուցումն ընթացել է ճակատամարտի թեժ պահին, այդ իսկ պատճառով այն կոչվել է Թեժ անունով:

Նման պայմաններում, իր ցեղակիցների գործելակերպին հատուկ, Բուղան դիմեց խարդավանքի: Մութավաքիլից Եսայիի համար բերել տվեց մի թուղթ, որով նրան հրավիրեց Բաղդադ՝ խալիֆի հետ խաղաղության բանակցություններ վարելու: Լեռնցի ասպետ-զորավարը որքան խիզախ ու անպարտ էր, այնքան էլ միամիտ ու հավատավոր էր թշնամու խարդավանքներին դեմ հանդիման: Եսայի իշխանը գնաց արաբական բանակի կայանատեղի, ուր ընդունվեց մեծամեծ պատիվներով: Նրան նվիրեցին սուր, թանկագին հանդերձներ, նժույգներ, վրան: Ծանարների երկրում և Արցախում խայտառակ պարտություններ կրելուց հետո խալիֆը 855 թ. Բուղային Հայաստանից հետ կանչեց: Գտիչից վերադառնալով Պարտավ՝ Բուղան Հայաստանի տարբեր վայրերից գերեվարած հայ իշխաններին շղթայակապ ուղարկեց խալիֆի մոտ: Գերյալների թվում էր նաև թշնամուն ծառայություններ մատուցած Սմբատ Բագրատունի սպարապետը: Գերվածների խմբից առանձին, ոչ իբրև գերի, արաբական պահակի ուղեկցությամբ Բաղդադ գնաց Աբու-Մուսե Առանշահիկը: Այդպես էլ նա չվերադարձավ հայրենիք՝ նահատակվելով Բաղդադի բանտում:

Եսայի Աբու-Մուսեի և Գտիչի անանուն մյուս պաշտպանների մաքառումը հայ ժողովրդի ազգային ազատագրական շարժման պատմության ամենանշանավոր էջերից մեկն է: Իրավացի է Լեոն. «Եսայի Աբու-Մուսեն իր գլխավորած պայքարով ամենախոշոր մխիթարական երևույթն էր կազմում հայոց աշխարհի այդ ժամանակվա արյունոտ նահատակումների մեջ»: Այնքան տպավորիչ էր այդ պայքարը, որ Արծրունիների տան պատմիչ Թովմա Արծրունին Եսայի Աբու-Մուսեին Արծրունի իշխաններից ավելի բարձր էր դասում:

Մինչև վերջերս էլ Գտիչի հողածածկ միջնաբերդի վիմահերձի գլխին դեռ կանգուն անտաշ քարով շինված եկեղեցին տեղացիները կոչում էին Երիցու որդի: Անդունդի վրա կախված կառույցը, որ 2020 թ. բռնազավթվեց Ադրբեջանի կողմից, հիացմունք ու զարմանք էր պատճառում ականատեսներին: Եկեղեցին ևս մի վկայություն է հայ հավատավոր մարդու պայքարող ոգու և շինարար քանքարի մասին:

Սբ. Հովհաննես եկեղեցի

Սբ. Հովհաննես եկեղեցին գտնվում է Տող գյուղի կենտրոնում՝ թեքադիր տեղանքի վրա: Շրջապատված է պարսպապատով: Եկեղեցու հյուսիսային պատը կիսով չափ միաձուլված է ժայռի հետ, իսկ հարավային պատն ամբողջությամբ բաց է: Հյուսիսային պատի բացվածքը մեկն է, իսկ հարավայինն ունի երեք լուսամուտ: Եկեղեցու միակ մուտքն արևմտյան կողմից է և բացվում է դեպի բակը: Բակի հարավարևմտյան անկյունում կլոր աշտարակն է, որտեղից երևում է գյուղի և շրջակա համայնապատկերը: Եկեղեցու (չափերը՝ 12,9×21,7 մ) ծածկը հենվում է չորս հոյակապ սյան վրա, կառուցված է Կավաքի քարահանքից բերված տեղական քարերով: ➥ էջ 7

Արցախի Տող բնակավայրը և հոգևոր կառույցները

Գտչաբերդ, 9-րդ դար

➥ էջ 6

Արևմտյան պատն արտաքինից շարված է սրբատաշ, իսկ մյուս պատերը՝ կիսամշակ քարերից: Թաղակապ առաստաղի բարձրության շնորհիվ տանիքի թեքությունները համեմատաբար մեծ են: Եկեղեցին ուներ քարե խաչկալ, որի վրա կար ընդարձակ արձանագրություն. «Թվին: ՌՃՁ» (1736 թ.): Այս սուրբ Ոհանես եկեղեցուս գլուխն նորոգեց Ղուկազ վարդապետի որդի Մելիք Եկանն. յիշատակ է հոգոյն իւրոյ. ով կարդայ մեկ բերան Աստուած ողորմի ասէ»: Դատելով տարբեր սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից՝ բուն եկեղեցին միջնադարյան ծագում ունի: Մակար եպս. Բարխուդարյանցը նշում է, որ այն «շատ հին է»՝ մոտավորապես 13-րդ դարից: Եկեղեցու հյուսիսարևմտյան պատին կից եղել է մատուռ, որը նաև դամբարան էր, ուր ամփոփված են եղել Դիզակի մելիքները, նաև մելիք Եգանն ու որդին՝ մելիք Եսային: Սակայն մատուռ-դամբարանի միայն հիմքերն էին պահպանված:

Եկեղեցու ներսում և շրջակայքում պահպանվում էին զարդաքանդակներով տապանաքարեր, որոնց վրա առկա վիմագրերը տեղում ժամանակին արձանագրել են և՛ Ս. Ջալալյանցը, և՛ Մ. Բարխուդարյանցը. ««Այս է տապան մեծին Մելիք Եկանի որդի Մելիք Եսայուն եւ էր սա իշխան կարգեալ Նատիր Շահէն. ԼԳ. ամ տիրեաց երկրիս Դիզակու եւ արար բազում քաջութիւն եւ յաղթութիւն ընդ անօրէնսն, եւ էր ինքն պարթև եւ յոյժ զօրաւոր քան զառաջինսն իւր եւ թել կենաց սորա եւ կամաւ Աստուծոյ վաղճանեցաւ թվ. ՌՄԼ. հոգտեմբերին Բ.-ին գշ. որ ընթեռնուք, մէկ Հայր մեղայ ասացէք. ամէն»: «Այս տապան լուսահոգի Մելիք Արամի որդի Բաղր բէկին. թվ. ՌՄԼԸ. էր» (Ս. Ջալալյանց, 2016, 445–446):

2018 թ. իրականացվել են ներքին ու արտաքին հարդարման աշխատանքներ, և մինչև 2020 թ. Ադրբեջանի կողմից բռնազավթումը՝ Ս. Հովհաննես եկեղեցին գտնվում էր բարվոք վիճակում: Պահպանվում էին նաև վերոհիշյալ արձանագիր տապանաքարերը:

Սբ. Ստեփանոս եկեղեցի

Սբ. Ստեփանոս եկեղեցին գտնվում է Տող գյուղի հարավարևմտյան կողմում՝ հին գերեզմանատան մոտ: Մակար եպս. Բարխուդարյանցը դեռևս 19-րդ դարի վերջին արձանագրել է եկեղեցու դռան ճակատակալ քարի վրա առկա հետևյալ արձանագրությունը. «Թվ ՌԵՂԶ (1747 թ.) Յիշատակ է սուրբ ըՍտեփանոս եկեղեցուս գլուխն, որ նորոգեց Մելիք Եկան և որդին Մելիք Եսային, յիշատակ է հոգոյ» (Մ. Բարխուդարյանց, 1999, 199): Հիշյալ արձանագրությունը վկայում է, որ եկեղեցին գոյություն է ունեցել վաղուց, և մելիք Եգանն ու որդին պարզապես նորոգել են նրա տանիքը:

Հատակագիծը ներկայացնում է 12×7,8 մետր չափերի ուղղանկյուն դահլիճ, որը արևելյան կողմից պսակում են բեմի և խորանների խորշերը: Բեմ-աբսիդն ունի շեշտված կիսագլանաձև տեսք: Թաղածածկ շենքը կառուցված է սրբատաշ և կոպտատաշ քարերով: Ճակատային պատերը կառուցված են կոպտատաշ, իսկ թաղի կամարները, մուտքը և լուսամուտները՝ սրբատաշ մեծ քարերով:

Ներսից եկեղեցին բաժանված է 2 անհավասար մասի: Հյուսիսային՝ առավել նեղ ու փոքր մասում տապանաքարեր էին, որից էլ կարելի է ենթադրել, որ յուրօրինակ տապանատան դեր է ունեցել այն: Միակ մուտքն արևմտյան կողմում է գտնվում: Եկեղեցու պատերի մեջ ագուցված են մոտ 50 խաչքար, տապանաքար, խաչաքանդակ կոթողի բեկոր, որոնց մի մասի վրա առկա են նաև արձանագրություններ (տես Դիվան հայ վիմագրության, 1982, 176): Եկեղեցու արևմտյան ճակատամասի խաչքարի վրա հետևյալ արձանագրությունն է. «Թվին: ՋՁ: (1531) ես Տ[է]ր Դանի[էլ] կ[ա]ն[կն]եց[ու]ցի» (Դիվան հայ վիմագրության, 1982, 177): Եկեղեցու շուրջը հին գերեզմանատան տապանաքարերն են, որոնց մի մասն ունի հետաքրքիր պատկերաքանդակներ ու հայերեն արձանագրություններ, ինչպես, օրինակ, «Ուստայ Յեհանէս թվին: ՋՂԴ (1545)»:

Դատելով եկեղեցու պատերին առկա արձանագրություններից և հարակից այլ նյութերից՝ կարելի է ենթադրել, որ եկեղեցին գործել է առնվազն 16-րդ դարից: 19-րդ դարավերջին սույն եկեղեցին ուսումնասիրած Մ. Բարխուդարյանցն այն տեսակետն է արձանագրել, որ եկեղեցին խիստ հին է, այն առնվազն վեց հարյուր տարվա շենք է (Մ. Բարխուդարյանց, 1999, 200):

Կույսերի անապատ եկեղեցի

Կույսերի անապատ եկեղեցին գտնվում է Տող գյուղի հյուսիսարևմտյան եզրին՝ թեք լանջի վրա: Ս. Ջալալյանցի նկարագրությամբ՝ «Այս գյուղի աջ կողմում կա սագաշեն եկեղեցի և Կուսանաց անապատ[ը], որի շուրջ պատվելի մարդկանց գերեզմաններ են» (Ս. Ջալալյանց, 2016, 445):

Գտչավանք, 13-րդ դար

Մ. Բարխուդարյանցն առավել հանգամանալից է նկարագրել Կույսերի անապատ եկեղեցին. «Հանգստարանիս վերևի ծայրում կա մի քարուկիր եկեղեցի ևս, կառուցված մի կամարի վրա, որի ճակատի խաչի վրա փորագրված է. «Խաչս Վարդան»: Եկեղեցուս մէջ է Մելիք-Բախտամի գերեզմանն, որ ծածկված է հողով: Եկեղեցուս մոտ կան խուցերի եւ կացարանների բակեր եւ բեկորներ, որոնց մասին պատմում են, թե կուսանոց է, եղել է անապատ» (Մ. Բարխուդարյանց, 1999, 200): Պատմագրի վկայությամբ՝ Տող ավանում պահվում էր արծաթյա մի խաչ՝ Կուսանաց անապատի հիշատակությամբ. «Յիշատակ է Մելիք Եսայի(ու) որդի Սափարի բէկին, որ ետ Դողա Կուսանաց անապատին» (Մ. Բարխուդարյանց, 1999, 200):

Ամբողջ շենքը կիսով չափ թաղված է հողի մեջ: Այդ պատճառով էլ արևմտյան հիմնական մուտքով հնարավոր չէ մտնել եկեղեցի: Անապատը, ճիշտ է, ուշ շրջանին է վերաբերում, սակայն իր վրա կրում է հնի հետքերը:

Եկեղեցու դահլիճն ուղղանկյուն հորինվածք ունի: Հյուսիսային և հարավային մասերում երկու ավանդատներն են, արևելյան կողմում՝ խորանը: Մուտքը հարավից է, ունի չորս փոքր լուսամուտ: Եկեղեցու ներսում գտնվում է 1787 թ. մահացած Մելիք Բախտամի տապանաքարը: Եկեղեցու շուրջը գտնվող գերեզմանատան տապանաքարերի հիմնական մասը թվագրվում է 19–20-րդ դարերով:

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ
պ. գ. դ., պրոֆեսոր

Գրիգոր Գ Պահլավունին հայոց կաթողիկոս.
կաթողիկոսարանի տեղափոխումը Հռոմկլա

➥ էջ 5

Կաթողիկոսը, լսելով այդ առաջարկը, շատ է ուրախանում, տալիս է իր համաձայնությունը և վերադառնում Ծովքի դղյակ՝ այդ մասին տեղյակ պահելով իր եղբորը՝ Ներսեսին: Աթոռի՝ Հռոմկլա տեղափոխումը Գրիգոր Գ Պահլավունին իրականացրեց 1149 թ.: Որոշ ժամանակ անց կաթողիկոսը 15000 դահեկանով գնեց այն, որից հետո տիկին Բեաթրիսը տվեց նրանց կտակ, համաձայն որի՝ Հռոմկլան այսուհետ Պահլավունիների սեփականությունն էր: Ձեռք բերելով ամրոցը՝ կաթողիկոսն ու իր եղբայրը Հռոմկլան վերածեցին կաթողիկոսարանի և այնտեղ կառուցեցին գմբեթակիր կաթողիկե եկեղեցի՝ հարակից շինություններով: Այստեղ հարց է առաջ գալիս նաև, թե ինչու այդ ժամանակ Գրիգոր Գ Պահլավունին կաթողիկոսարանը չտեղափոխեց Կիլիկիա, որտեղ Ռուբինյանները գնալով օր օրի ավելի էին հզորանում: Պատասխանը շատ պարզ է: Հոգևոր իշխանությունը ոչ մի ցանկություն չուներ ենթարկվելու աշխարհիկ իշխանությանը, ուստի և գերադասում էր հնարավորին պահպանել իր անկախությունը:

1151 թ. դադարում է գոյություն ունենալ Եդեսիայի կոմսությունը, և նրա նախկին տարածքները՝ այդ թվում և Հռոմկլան, հայտնվում են Հալեպի սուլթան Նուր ալ-Դինի և Իկոնիայի սելջուկյան սուլթան Մասուդի իշխանության տակ: Նման պայմաններում, երբ մշտական վտանգ կար Բյուզանդական կայսրության կողմից Հայոց Եկեղեցին ենթարկելու միության հարցում, Նուր ալ-Դինի տիրապետության տակ ընկնելը կրոնական հարցերում որևէ խնդիրներ չէր առաջացնի հայոց կաթողիկոսարանի համար: Եվ հետագա տասնամյակների պատմությունն էլ ցույց տվեց, որ Պահլավունի կաթողիկոսների հաշվարկները ճշգրիտ էին:

Ամեն դեպքում պետք է նշել, որ թեև Գրիգոր Գ կաթողիկոսի նստավայրը գտնվում էր Կիլիկիայի սահմանագլխին, բայց ոչ Կիլիկիայում, այնուամենայնիվ Հռոմկլայում հաստատված Պահլավունի հայրապետներն իրենց հոգևոր իշխանությունը գործադրում էին նաև Կիլիկիայի հայկական պետությունում, ինչպես նաև բուն Հայաստանում, Եգիպտոսում, Բալկաններում, Փոքր Ասիայում, Ասորիքում և այլ վայրերում: Ստեփանոս Օրբելյանը նշում է, որ Հռոմկլան «.... էր գահ հայրապետացն և աթոռ կաթողիկոսացն հայոց: Յորում կային անպատմելի սրբութիւնք և նշխարք առաքելական»: Այլ խոսքով՝ Հռոմկլայի կաթողիկոսարանը շարունակում էր մնալ որպես համահայկական հոգևոր միակ կենտրոն: Կարևոր է նաև նշել, որ 12-րդ դարի կեսերին Կիլիկիայի հայ իշխաններն էլ որոշակի մասնակցություն են ունենում եկեղեցական կյանքի աշխուժացման և զարգացման գործում:

Հայտնի է, որ Ռուբինյան իշխանապետերից Թորոս Բ-ն տաճարներ է կառուցում Անարզաբայում և հայոց իշխանապետության այլ քաղաքներում: Այդ առթիվ հայոց իշխանապետը Եկեղեցուն և հոգևոր պաշտոնյաներին նվիրում է առատ պարգևներ: Նրանից բացի՝ իրենց թեմական եկեղեցիներին մեծարժեք նվիրատվություններ և պարգևներ են տալիս Լամբրոնի Հեթումյանները: Հետագայում Կիլիկիայի պետության առանձին ֆեոդալներ նույնպես որոշակի նվիրատվություններ և պարգևներ էին շնորհում Հայոց Եկեղեցուն: Շատ կարևոր է նաև նշել, որ Հռոմկլայի ամրոցն իր անառիկ դիրքով ուներ պաշտպանական մեծ հնարավորություններ և հիմնականում զերծ էր մնում օտար նվաճողների ավերիչ ասպատակություններից: Ամրոցի կայազորից զատ՝ հայոց կաթողիկոսը նաև ռազմական այլ ուժեր ուներ, որոնք պաշտպանում էին իր տիրույթները և հնազանդ պահում դրանցում բնակվող հպատակներին:

Ինչ վերաբերում է Ծովքի հայրապետական դղյակին, ապա պետք է նշել, որ 1149 թ. կաթողիկոսարանի տեղափոխումից հետո այն մնաց կանգուն և դիտվում էր որպես վանական հաստատություն, շարունակեց իր հոգևոր գործունեությունը բավականին երկար ժամանակ և հետագա դարերում հիշատակվում է միջնադարյան տարբեր պատմիչների աշխատություններում:

Արամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
պ. գ. թ., դոցենտ

Միանձնուհու առաքելության խորհուրդը

Հարցազրույց մայր Եղիսաբեթի հետ

— Մա՛յր Եղիսաբեթ, թույլ տվեք, մինչև մեր զրույցին անցնելը, ամենայն բարեմաղթանքներով շնորհավորել Ձեզ և միանձնուհիներին՝ ապրիլի 7-ի առիթով:

— Մենք նույնպես շնորհավորում ենք Աստվածածնի ավետման տոնի առիթով, և մեր խնդրանքն ու աղոթքն է, որ Աստվածածինը բարեխոս լինի մեր եկեղեցու և երկրի համար:

— Ո՞րն է Ձեր առաքելության խորհուրդը, մա՛յր Եղիսաբեթ: Ինչն եք համարում մենաստանի գերակա նպատակը:

— Այսօր մեր առաքելությունն ու նպատակն է, որ վերականգնվի վանականությունը մեր Եկեղեցում, որը դարեր շարունակ չի եղել և շատ կարևոր է մեր ազգի համար: Սուրբ Պահիսիոս Աթոսացին ասում է, որ վանքերը եկեղեցու ամրոցներն են, իսկ վանականը՝ ժայռերի վրայի փարոսը: Վանականը պետք է իր կենցաղավարությամբ լույս պարգևի մարկանց և առաջնորդի դեպի հավիտենական կյանք:

— Կպատմե՞ք մենաստանի կյանքի առանձնահատկությունների մասին և առհասարակ ինչպե՞ս եք կազմակերպում ձեր առօրյան:

— Մենաստանի կյանքն ընթանում է ըստ վանականների համար մշակված առօրյայի, որում առաջնահերթ են աղոթքը և հնազանդությունը:

— Հավատքը՝ առանց գործերի, ասում են, մեռած հավատք է: Միանձնուհին ինչպե՞ս է նպաստում մարդկանց՝ եկեղեցուն ավելի մոտ լինելուն, մա՛յր Եղիսաբեթ: Ինչ եկեղեցանպաստ և հայրենօգուտ գործունեություն է ծավալում մենաստանը:

— Դեռևս Գայանե վանքում երջանկահիշատակ քույր Տաթևը երեխաների հետ դասընթացներ էր անցկացնում: Այժմ էլ մեր քույրերն են շարունակում ուսուցանել: Ղազարավանի և հարակից գյուղերի երեխաները մեզ մոտ գալիս են դասընթացների: Ունենք նաև արցախցի աշակերտներ: Իսկ ամենակարևորն աղոթքն է, որին նաև երեխաներն են մասնակից:

— Համապատասխան լծակներ ունենալու դեպքում ձեր մենաստանը բարեգործական ինչ ուղղվածություն կնախընտրեր:

— Հենց երեխաների կրթությունը. այժմ շենքային պայմանների կարիք կա, որպեսզի դասերը համապատասխան վայրում կազմակերպվեն: Հուսով ենք, որ շուտով հնարավոր կլինի:

— Միանձնուհի լինելը մեծ կամք է պահանջում: Դժվա՞ր է արդյոք ապրել մենաստանում՝ հատկապես երիտասարդի համար, որ ավելի զգայուն է աշխարհիկ կյանքի հանդեպ:

— Ամենակարևորը սերն է, եթե դա կա, ապա մարդը կարող է իր ընտրությանը հավատարիմ մնալ: Ինչպես ընտանիք կազմելու դեպքում, այնպես էլ Աստծո ընտանիքում լինելու պարագայում առանցքը սերն է: Ինչպես Պողոս առաքյալն է ասում, ամենամեծը սերն է:

— Կպատմե՞ք միանձնուհի դառնալու փորձաշրջանի մասին. ո՞րն էր ամենադժվար հաղթահարելին Ձեզ և նորեկների համար:

— Ամենադժվարը հնազանդությունն է:

— Քրիստոս քարոզել է սիրել միմյանց, ընդունել մարդկանց իրենց արատավոր կողմերով: Արդյո՞ք մենաստան տեղափոխվելը մեկուսանալ էր մարդկանցից, հրաժարում՝ աշխարհիկ կյանքի դժվարություններից:

— Սուրբ հայրերն ասում են, որ վանականն աշխարհից հեռանում է ոչ այն պատճառով, որ ատում է աշխարհը և ուզում է փախչել, այլ որ սիրում է աշխարհը և ուզում է առանձնության մեջ աղոթքով օգնել աշխարհին այն հարցերում, որոնցում մարդն անզոր է, և միայն Աստված կարող է գործել:

— Լինելով միանձնուհի՝ երբևէ ցանկություն ունեցե՞լ եք ավելի մոտ լինել մարդկանց:

— Աղոթքի համար առանձնություն է պետք, ինչպես Տերն է ասում. «Այլ երբ դու աղոթես, մտիր սենյակդ, փակիր դռներդ և ծածուկ աղոթիր քո Հորը, և քո Հայրը, որ ծածուկ տեսնում է, քեզ հայտնապես կհատուցի» (Մատթ. Զ 6):

Ձախից՝ մայր Եղիսաբեթը

— Դուք սահմանափակ շփվում եք շրջապատի մարդկանց հետ, աշխատում դեռահասների շրջանում: Հավատացյալների մեջ կարող է ցանկություն առաջանալ Ձեր օրինակով ծառայել Աստծուն, դառնալ միանձնուհի: Ինչ խորհուրդ կտայիք երկընտրանքի մեջ գտնվող երիտասարդ մեկին իր առաքելության կողմնորոշման հարցում:

— Աղոթել... որ Տիրոջ կամքն իմանա: Ամենակարևորը, որ Տիրոջ կամքով լինի. այդ դեպքում Տերն Ինքը կհոգա ամեն բան:

— Ասում են՝ Աստվածածինն ավելի մոտ դարձավ Աստծուն իր հղիությամբ, նույնպես և բոլոր կանայք իրենց հղիությամբ մոտենում են Արարչին՝ նմանվելով Նրան՝ իբրև նոր կյանք պարգևող էակներ: Դուք՝ միանձնուհիներդ, ընտրել եք Աստծուն նվիրվելու և մերձենալու այլ ճանապարհ: Աստվածահաճո՞ կլինի արդյոք, եթե կյանքի ինչ-որ մի փուլում միանձնուհին, հավատարիմ մնալով Աստծուն, սկսի ապրել աշխարհիկ կյանքով՝ հեռանալով մենաստանից, կամ ընտրի մայրության խորհուրդը՝ որպես աստվածային հրաշք: Արդյո՞ք դա կհամարվի ուխտադրժություն կամ մեղք:

— Աստվածածինն ի սկզբանե էր մոտ Աստծուն. հենց դրա համար ընտրվեց: Եթե կատարվել է հերակտրության կարգ, և ընդունել է կրոնավորության ուխտ, ապա, այո՛, ուխտադրժություն է, իսկ եթե փորձաշրջանում է, ապա այդ դեպքում այլ ճանապարհ ընտրելն ուխտադրժություն չէ:

— Թերևս բոլորին չի տրված մարդկային մեղքերից հեռու լինելու շնորհը, բայց սխալական մարդն էլ երբևէ կարող է փորձել ճիշտ ուղու վրա կանգնել: Արդյո՞ք կարող են միանձնուհի դառնալու հավակնություն ունենալ այն կանայք, որոնք ցանկանում են ապաշխարանքի արժանանալ սխալ վարքի համար:

— Այո՛, եթե իսկապես զղջում են, կարող են: Տերն Ինքն է ասում. «Ես չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղաւորներին՝ ապաշխարութեան» (Ղուկաս Ե 32):

— Շնորհակալ եմ զրույցի համար, մա՛յր Եղիսաբեթ:

— Ես նույնպես շնորհակալ եմ: Աստված օրհնի ձեզ:

Հարցազրույցը վարեց
Հերմինե ՍԱՀԱԿՅԱՆԸ

Աստվածաշունչ՝ գիրք գրոց



ԳՈՎՔ ԿԱՏԱՐԵԱԼ ԿՆՈՋ

Կնոջ շնորհը հրճուանք է նրա ամուսնուն, եւ նրա ողջախոհութիւնը կօրայնուում է նրա ոսկորները: Խոնարհ կինը Տիրոջ պարգեւն է. անփոխարինելի է առաքինի հոգին: Շնորհների վրայ շնորհ է ամօթխած կինը, եւ համարժէք կշիռ չկայ նրա կուսակ հոգու համար: Տիրոջ բարձունքներում ծագող արեգակ է բարի կնոջ գեղեցկութիւնն իր փան յարդարանքի մէջ: Ինչպէս լուսապուռ ճրագն է մաքուր աշտանակի վրայ, այնպէս էլ երեսի գեղեցկութիւնն է հանդարտ հասակի վրա: Ինչպէս ոսկեղէն սիւներն են արծաթեղէն խարիսխների վրայ, այնպէս էլ գեղեցիկ ոտքերն են խոնարհ գարշապարների վրայ: Սիրտս փառք է երկու բանի համար, եւ կայ մի երրորդ բան, որից իմ մէջ սարսուռ առաջացաւ: Դրանք են՝ պատերազմող մարդը, որն աղքատութեան պատճառով է թշուառ, եւ իմաստուն մարդիկ, որոնք արհամարհուած են: Բայց ով արդարութիւնից դառնում է դէպի մեղքը, Տէրը նրա համար սուր է պատրաստում: Դժուար թէ վաճառականը խուսափի յանցանքներից, եւ պանդուկապանը արդարանայ մեղքերից:

Յեսուի որդի Սիրաքի իմաստութիւնը
ԻԶ 16-28

Հանուն Եկեղեցու. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանի գիտական աշխատանքի համատեքստը

↩ էջ 3, 4

Իհարկե, Գլաձորից մնացել է ոչ թե վանական կենտրոնը, որի գտնվելու վայրը դեռևս քննարկվում է, այլ այնտեղ ստեղծված ձեռագրագանձը (և, իհարկե, դրանց հիշատակարանները): Կաթողիկոս Հովսեփյանը Պռոշյանների տոհմական պատմությամբ հետաքրքրված էր հիմնականում այն պատճառով, քանի որ նրանք մեծ եկեղեցիներ կառուցողներ էին: Լոկ պատկերացնելու համար, թե Գարեգին Վեհափառը որքան բծախնդիր է եղել որպես պատմաբան՝ վերստին սահմանելով, թե ինչ է նշանակում լինել առավելապաշտ, պետք է նայել գրքի վերջում նրա կազմած անձնանունների ցանկը, որը հայտնվել է մի քանի մասերում: Մեկ հաշվարկով՝ ցուցիչում (ինդեքսում) կան հազարից ավելի հատուկ անուններ:

Եզրափակելով պետք է ասենք, որ Հովսեփյան կաթողիկոսը համակարգված հայացք ուներ եկեղեցաբանության մասին, ինչն էլ հենց նրա ուսումնասիրության հիմքն էր: Նրա նախաձեռնած բոլոր աշխատանքները կարող էին լինել համատեքստային իր եկեղեցաբանության շրջանակներում, որն իր հերթին համակարգային է դարձնում նրա ամբողջ գրականությունը: Ինչպես տեսանք, նույնիսկ նրա ներկայացրած քրիստոսաբանությունը, ավելի ճիշտ՝ Հայ Եկեղեցու քրիստոսաբանությունն արմատավորված է եկեղեցաբանության մեջ, ինչպես այն ամենը, ինչը նրա ուսումնասիրությունների սահմանում է՝ բանասիրության, ճարտարապետության, արվեստի պատմության կամ ձեռագրագիտության բնագավառներում: Այս առումով կարող ենք ասել նաև, որ նա համակարգված աստվածաբան էր՝ իր մտքի և գրվածքների հետևողականության պատճառով: Նկատելի է նաև, որ նա յուրօրինակ կերպով կիրառեց իր համակարգված աստվածաբանությունը՝ նոր սահմանում տալով «կիրառական աստվածաբանությանը»: Մենք՝ հայերս, կարող ենք ասել, որ նա մեզ տվել է էթնիկ պատկանելության մեր լավագույն աստվածաբանությունը: Առավելաբար որպես եկեղեցական՝ նա այդ ամենն արել է եկեղեցու սիրուց դրդված՝ ի մասնավորի Հայ Եկեղեցու և ընդհանրապես Ընդհանրական Եկեղեցու համար:

Անգլերենից թարգմանեցին՝
Նարեկ սրկ. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ
Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆԸ

Տեքստը և ծանոթագրությունը տես “For the Love of the Church: Contextualizing the Scholarship of Catholicos Garegin Hovsēp‘ian”, Տոնագիր, Գիտական ժողովածու, Ե., 2021, էջ 403–413

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 15.04.2024 թ.
Տպաքանակը՝ 1265